Մարդկանց ձայնը II. հակամարտության հետևանքով տուժած հասարակությունների կարիքների հասցեագրումը Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության հաստատմանն ուղղված ջանքերում

Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց տեսակետները

«Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի նախնական ուսումնասիրություն

© Հայաստան, Վանաձոր, 2024թ.

Բովանդակություն

Հապավումներ 2

Ամփոփ նկարագիրը 3

Ներածություն. նախադրյալները և իրավիճակը 4

Ուսումնասիրության նպատակները 9

Մեթոդաբանությունը և տեսական շրջանակը 10

Ընտրանքի մեթոդաբանությունը 10

Տվյալների հավաքագրման տեխնիկաները 10

Վերլուծության մեթոդը 10

Տեսական շրջանակը 11

Ուսումնասիրության սահմանափակումները 11

Խաղաղության հետ կապված սպառնալիքները. ընկալումներն ու գնահատականները 13

Նախնական ուսումնասիրության ժողովրդագրությունը 13

Ռեսպոնդենտների հիմնական մտահոգությունները 17

Հիմնական արդյունքները և հետևությունները. կապերը և օրինաչափությունները 23

Անվտանգության հետ կապված սպառնալիքների վերլուծությունն ըստ տարածաշրջանային, գենդերային, տարիքային և մասնագիտական խմբերի 23

Բարեկեցության հետ կապված սպառնալիքների վերլուծությունն ըստ տարածաշրջանային, գենդերային, տարիքային և զբաղվածության խմբերի 29

Ազատության հետ կապված սպառնալիքների վերլուծությունը՝ ըստ տարածաշրջանային, գենդերային, տարիքային և զբաղվածության խմբերի 34

Ինքնության հետ կապված սպառնալիքների վերլուծությունն ըստ տարածաշրջանային, գենդերային, տարիքային և զբաղվածության խմբերի 39

Կատեգորիաների միջև լրացուցիչ կապերը 42

Հղումներ 50

Հապավումներ

ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ՃԿՆ	Ճգնաժամային կառավարման նախաձեռնություն/Մարտի Ահտիսաարիի խաղաղության հիմնադրամ
ՀՌ	Հաշտեցման ռեսուրսներ
ԱՊԸՔ	Եվրոպական միության Անվտանգության և պաշտպանության ընդհանուր քաղաքականություն
ԵՄ	Եվրոպական միություն
ՀԵՄԱ	Հայաստանում Եվրոպական միության առաքելություն
ԵՄՄԱ	Վրաստանում Եվրոպական միության մոնիթորինգի առաքելություն
ԱԴԾ	Անվտանգության դաշնային ծառայություն
ԵԱՀԿ	Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ



Ամփոփ նկարագիրը

Հայաստանի և Ադրբեջանի միջև Լեռնային Ղարաբաղի շուրջ երկարատև հակամարտությունը շարունակում է ձևավորել Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական լանդշաֆտը՝ առաջացնելով զանգվածային ցնցումներ ու մարդկային խոր տառապանք: Եվրոպական միության աջակցությամբ՝ «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի կողմից իրականացված սույն ուսումնասիրությունը շատ կարևոր է՝ 2023 թվականի սեպտեմբերին զանգվածային արտագաղթի ժամանակ Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց վրա այս հակամարտության համապարփակ ազդեցությունը հասկանալու համար: Սույն փաստաթուղթը զեկույցների շարքում երկրորդ զեկույցն է. 2024 թվականի փետրվարին հրապարակված առաջին զեկույցը բացառապես կենտրոնանում էր Հայաստանի Հանրապետությունում հասարակության վրա հայ-ադրբեջանական հակամարտության հետևանքների վրա:

Սույն հետազոտության մեջ կիրառվում է Յոհան Գալթունգի «Մարդու հիմնարար կարիքների տիպաբանությունը», ինչպես նաև «Դիրքորոշում, շահեր, կարիքներ» (ԴՇԿ) մոդելը՝ որպես մեթոդաբանական ուղեցույց: Զեկույցն ամփոփում է Հայաստանում ներկայումս բնակվող՝ տեղահանված անձանց հետ անցկացված 106 սահմանված ձևաչափով հարցազրույց՝ ներկայացնելով նրանց կարիքների ու մտահոգությունների խորացված ուսումնասիրություն չորս կարևորագույն ուղղություններով՝ անվտանգություն, բարեկեցություն, ազատություն և ինքնություն: Վերլուծությունն իրականացվել է Ճգնաժամային կառավարման նախաձեռնության (ՃԿՆ) հետ նախկինում փոխկապակցված ընկերությունների կողմից մշակված «Inclus» թվային հարթակի միջոցով, որը մանրամասն պատկերացում է տալիս այդ համայնքների վրա ազդող գործոնների բարդ փոխհարաբերության մասին:

Ուսումնասիրության մեջ շեշտադրվում են ռեսպոնդենտների շրջանում խաղաղության սպառնալիքների վերաբերյալ ընկալումների միջև առկա մի շարք հիմնական կապեր, դիլեմաներ և հակասություններ: Հայաստանում մնալու պլաններ ունեցողների կամ չկողմնորոշվածների և Լեռնային Ղարաբաղ վերադառնալու մտադրություն ունեցողների միջև հիմնական տարբերությունը՝ նրանց մտահոգությունների ինտենսիվության և ուղղվածության մեջ է: «Պոտենցիալ վերադարձողները» զգալիորեն ավելի մեծ մտահոգություններ են հայտնում բոլոր կատեգորիաներում, մասնավորապես՝ կապված ինքնության, ժողովրդավարական կառավարման և մշակույթի պահպանության հետ: Փոխարենը՝ Հայաստանում մնացողներն ավելի հավասարակշռված, սակայն դեռևս հիմնավոր մտահոգություններ են հայտնում՝ ընդգծելով ընդհանուր անվտանգության ու կենսամակարդակի կարևորությունը: Այդ բազմակողմ մտահոգությունների հասցեագրումը պահանջում է մանրամասն, համատեքստով պայմանավորված միջոցների ձեռնարկում, որոնցով առաջնահերթություն է տրվում ինչպես անվտանգության անհետաձգելի կարիքներին, այնպես էլ խաղաղության կառուցման երկարաժամկետ նպատակներին:

Ուսումնասիրության եզրակացության հատվածում ներկայացված են առաջարկություններ, որոնք Հայաստանում ապաստան գտած՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց համալիր կարիքների հասցեագրմանն ուղղված համապարփակ և իրատեսական մոտեցումներ են ներկայացնում՝ երկարաժամկետ հեռանկարում ունենալով հայ-ադրբեջանական խաղաղության գործընթացի խթանումը:

Ներածություն. նախադրյալները և իրավիճակը

Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը. հայ-ադրբեջանական հարաբերությունների բարդ համապատկերը

Հարավային Կովկասի տարածաշրջան հանդիսացող Լեռնային Ղարաբաղը եղել է Հայաստանի և Ադրբեջանի միջև երկարատև հակամարտության էպիկենտրոնը: Պատմամշակութային բարդությունների վրա արմատացած այս վեճը ծագել է դեռևս մինչև Խորհրդային միության փլուզումը, որի շուրջ լարվածությունը ձգվում է տասնամյակներ շարունակ: Խորհրդային միության փլուզմամբ հրահրված Ղարաբաղյան առաջին պատերազմը (1988-1994թթ.) էլ ավելի սաստկացրեց այդ էթնիկ և տարածքային վեճերը: 1992-1994 թվականներին տեղի ունեցավ լուրջ էսկալացիա, երբ հայկական ուժերը վերահսկողություն հաստատեցին Լեռնային Ղարաբաղի և հարակից ադրբեջանական տարածքների նկատմամբ: Պատերազմի հետևանքով զոհվեց մոտ 30,000 մարդ, իսկ ավելի քան մեկ միլիոն մարդ տեղահանվեց, այդ թվում՝ ադրբեջանցիներ Լեռնային Ղարաբաղից և Հայաստանից, ինչպես նաև հայեր՝ Ադրբեջանից:

Ղարաբաղյան երկրորդ պատերազմը և դրա հետևանքները

2020 թվականին Ղարաբաղյան երկրորդ պատերազմը, որը նաև հայտնի է որպես 44-օրյա պատերազմ, դարձավ այս տևական հակամարտության առանցքային շրջափուլը: Ադրբեջանի՝ ռազմավարական կարևորության ռազմական արշավը, որի ընթացքում կիրառվեցին առաջադեմ ռազմական տեխնոլոգիաներ, զգալիորեն փոխեց վիճելի տարածքի նկատմամբ վերահսկողության դինամիկան: Պատերազմի ընթացքում զոհվեց ավելի քան 6500 մարդ, ինչն ընդգծում է հակամարտության լրջությունը: Հակամարտության պատմության մեջ շրջադարձային պահը 2020 թվականի նոյեմբերի 10-ին Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի միջնորդությամբ հրադադարի վերաբերյալ եռակողմ հայտարարության ստորագրումն էր: «Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում հրադադարի և բոլոր ռազմական գործողությունների դադարեցման մասին» այս հայտարարության համաձայն՝ Ռուսաստանը 1960 հոգուց բաղկացած խաղաղապահ զորակազմ տեղակայեց Լեռնային Ղարաբաղում և Հայաստանի հետ կարևոր կապն ապահովող Լաչինի միջանցքի երկայնքով: Խաղաղապահ զորակազմի տեղակայմամբ ամրապնդվեց Ռուսաստանի ազդեցությունը հակամարտության կարգավորման գործընթացում:

Էսկալացիաները և հումանիտար ճգնաժամը

2022 թվականի սեպտեմբերի 13-ին տեղի ունեցավ լուրջ էսկալացիա, որի ժամանակ Ադրբեջանը լայնամասշտաբ հարձակում սկսեց հայկական տարածքների վրա[i]՝ թիրախավորելով հարավում գտնվող Սյունիքի, Գեղարքունիքի և Վայոց Ձորի մարզերի մինչև 23 բնակավայր: Այս հարձակման արդյունքում վնաս հասցվեց Գորիս և Կապան քաղաքների, ինչպես նաև Սոթք, Արտանիշ, Ջերմուկ և Կութ գյուղերի ռազմական և քաղաքացիական տարածքներին: Այս ռազմական գործողությունները[ii], որոնք ամենադաժանն էին 2020 թվականից ի վեր, ժամանակավորապես դադարեցվեցին սեպտեմբերի 14-ին՝ հրադադարից հետո: Այնուամենայնիվ, խաղաղությունն անկայուն էր, և մինչև ամսվա վերջ գրանցվել էին նոր բախումներ:

2022 թվականի դեկտեմբերին հակամարտությունն այլ ընթացք ստացավ, երբ Ադրբեջանի քաղաքացիական բնակիչները[iii], ներկայանալով որպես բնապահպանական ակտիվիստներ, արգելափակումներ ստեղծեցին Լաչինի միջանցքի երկայնքով: Այս գործողության հետևանքով զգալիորեն սրվեց հումանիտար իրավիճակը, սահմանափակվեց մարդկանց և պարենի համար կենսական նշանակություն ունեցող

մուտքը: Ճգնաժամը խորացավ 2023 թվականի ապրիլին՝ Լեռնային Ղարաբաղի ամբողջական արգելափակմամբ, երբ Ադրբեջանն այդ գլխավոր ճանապարհին անցակետ տեղադրեց: Արգելափակումն առաջացրեց միջազգային մտահոգություն: 2023 թվականի սեպտեմբերին մեկնարկեց նոր փուլ, երբ Ադրբեջանը «հակաահաբեկչական գործողություններ» սկսեց Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանում՝ վկայակոչելով սահմանադրական կարգի վերականգնման նպատակը և պնդելով այնտեղ հայկական ռազմական ուժերի առկայության մասին: Այս գործողության հետևանքով տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղից էթնիկ հայերի զանգվածային արտագաղթ: Ստեփանակերտից հեռացող իշխանությունների հաղորդմամբ ավելի քան 100,000 բնակիչ հարկադրված փախավ Հայաստան՝ չցանկանալով ապրել Ադրբեջանի վերահսկողության ներքո: Արդյունքում, Լեռնային Ղարաբաղի անջատողական կառավարությունը հայտարարեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության լուծարման մասին:

Բարդացնելով առանց այն էլ լարված իրավիճակը՝ հաղորդվեց, որ Ադրբեջանի իշխանությունները կալանավորել են Լեռնային Ղարաբաղի երեք նախկին նախագահներին և տեղի օրենսդիր մարմնի խոսնակին: Այս կալանավորումների, 44-օրյա պատերազմի մասնակիցների շարունակական ազատազրկումների, ինչպես նաև հետագա հակամարտությունների հետևանքով Հայաստանի և Ադրբեջանի հարաբերությունները շարունակում են սրված մնալ: Մշտական կալանավորումներն ընդգծում են հակամարտության բարդ բնույթը և երկու ժողովուրդների միջև այս երկարատև վեճի լուծմանը հասնելու ճանապարհին գոյություն ունեցող դժվարին մարտահրավերները:

Փոփոխվող դինամիկան և դաշինքների վերախմբավորումը

2020 թվականից ի վեր Հայաստանը նկատելիորեն փոխել է իր արտաքին քաղաքականությունը՝ այն աստիճանաբար ավելի մոտեցնելով արևմտյան դաշինքներին: Ռուսական ավանդական կախվածությունից հեռանալու այս ռազմավարական քայլը պայմանավորված է եղել ինչպես գլոբալ, այնպես էլ տարածաշրջանային իրադարձություններով, մասնավորապես՝ Ուկրաինայում Ռուսաստանի ներկայությամբ և Մերձավոր Արևելքում շարունակական լարվածությամբ: Իր սպառազինությունն արդիականացնելու և անվտանգության շրջանակն ընդլայնելու նպատակով Հայաստանն ակտիվորեն ձգտում է համագործակցել Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) կազմում չգտնվող երկրների հետ: Այս փոփոխությունը ներառում է Հնդկաստանի և Ֆրանսիայի պես երկրներից պաշտպանական սարքավորումների ձեռքբերումը, ինչպես նաև Հունաստանի և Կիպրոսի հետ անվտանգության ոլորտում համագործակցությունը: Բացի դրանից, այնպիսի երկրներ, ինչպիսիք են Նիդեռլանդները, Իտալիան և Շվեդիան ցուցաբերել են պաշտպանության ոլորտում Հայաստանի հետ համագործակցելու հետաքրքրություն: Իր միջազգային աջակցության ցանցն ընդլայնելու նպատակով Հայաստանը բանակցություններ է վարում Եվրոպական միության հետ՝ Խաղաղության եվրոպական գործիքի միջոցով աջակցություն ստանալու համար: Միաժամանակ Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ ընթանում են քննարկումներ՝ ուղղված անվտանգային միջավայրի գնահատմանը, պաշտպանական բարեփոխումների առաջխաղացմանը և պաշտպանության ոլորտում համագործակցության ամրապնդմանը: Նմանօրինակ երկխոսություններ ընթանում են նաև Ֆրանսիայի հետ, ինչն ընդգծում է Հայաստանի՝ իր անվտանգության դաշինքներն ու հնարավորությունները զանազանացնելու հանձնառությունը:

Միևնույն ժամանակ, Ադրբեջանը ջանքեր է գործադրում Մոսկվայի հետ հավասարակշռված հարաբերություններ հաստատելու ուղղությամբ: Թեև Ադրբեջանը հայտարարել է, որ ռուս խաղաղապահների տեղակայումը Ղարաբաղում թույլատրվում

է միայն մինչև 2025 թվականը, այնուամենայնիվ, այդ տարածքից հայերի սպասելի հեռանալուց հետո չկա ակնհայտ շտապողականություն՝ ռուսական ուժերի դուրսբերումն արագացնելու համար: Ներկայումս թե՛ Ռուսաստանը, թե՛ Ադրբեջանը ճնշում են գործադրում Հայաստանի վրա, որպեսզի վերջինս միջանցք տրամադրի Նախիջևանի ադրբեջանական էքսկլավից դեպի հիմնական երկիր, որը պետք է վերահսկվի Ռուսաստանի Անվտանգության դաշնային ծառայության (ԱԴԾ) կողմից:

Հայաստանի անվտանգության փոփոխվող առաջնահերթությունների կարևոր ցուցանիշ է Եվրոպական միության Ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականության (ԸԱՊՔ) շրջանակներում քաղաքացիական առաքելության (ՀԵՄԱ) տեղակայումը տարածաշրջանում: Այս առաքելությունն ամենօրյա պարեկային ծառայություն է իրականացնում հայ-ադրբեջանական սահմանի երկայնքով՝ ապահովելով միջազգային ներգրավվածության և աջակցության նոր մակարդակ: 2023 թվականին առաքելությունն ընդլայնեց իր տեղակայված անձնակազմը: Թե՛ Ռուսաստանը, թե՛ Ադրբեջանը դժգոհություն հայտնեցին Հայաստանում ՀԵՄԱ-ի տեղակայման առնչությամբ: Այնուամենայնիվ, ԵՄ-ն նույն առաջարկն արեց նաև Ադրբեջանին՝ առաքելությունն իր սահմանի կողմից տեղակայելու համար, հատկապես այն պատճառով, որ առաքելության երկարաժամկետ նպատակը Հայաստանի և Ադրբեջանի՝ հակամարտության հետևանքով բաժանված բնակչության միջև վստահության կառուցումն է:

Խաղաղության շուրջ փակուղի մտած բանակցությունները

ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից պատմականորեն վերահսկվող՝ Լեռնային Ղարաբաղի շուրջ խաղաղության բանակցությունների գործընթացում առաջացել են լուրջ խնդիրներ, հատկապես՝ 44-օրյա պատերազմի ընթացքում: Խումբը կանգնել է հակամարտության էսկալացիան արդյունավետորեն կանխելու դժվարությունների առջև: Ռուսաստանն առանցքային դերակատարություն է ունեցել այս բարդ գործընթացում՝ հաճախ շեղվելով Մինսկի խմբի մոտեցումից: Արդյունքում ի հայտ են եկել երկու հիմնական բանակցային ուղիներ, մեկը՝ Ռուսաստանի ղեկավարման ներքո, իսկ մյուսը՝ ԱՄՆ-ի աջակցությամբ Եվրոպական միության (ԵՄ) առաջնորդությամբ: Չափազանց կարևոր է ընդունել այն, որ Մինսկի խմբի գործունեությունը դադարեցվել է Ռուսաստանի կողմից Ուկրաինա ներխուժումից հետո՝ հանգեցնելով ավելի մասնատված միջնորդական ջանքերի: Վերջին շրջանում բանակցային գործընթացում մեծ առաջընթաց չի գրանցել, հատկապես՝ Ադրբեջանի ռազմական առաջխաղացումներից հետո: Այս առանցքային փոփոխությամբ անհրաժեշտություն առաջացավ վերագնահատել Լեռնային Ղարաբաղի հակամարտության մեջ ավանդական միջնորդական մեխանիզմներն ու մոտեցումները, ինչն էլ ավելի բարդացրեց կայուն խաղաղության պայմանագրին ձգտելու գործընթացը:

Հայաստանին և Ադրբեջանին բանակցային սեղանի շուրջ բերելը հեշտ առաջադրանք չէ: Հայաստանը կարծես գերադասում է օգտվել արևմտյան երկրների միջնորդությունից, մինչդեռ Ադրբեջանն առավել հակված է աշխատելու տարածաշրջանային այնպիսի տերությունների հետ, ինչպիսիք են Ռուսաստանը և Թուրքիան: Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի և Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի միջև 2023 թվականի հոկտեմբերին նախատեսված կարևորագույն հանդիպումը չեղարկվեց այն պատճառով, որ նախագահ Ալիևը համաձայն չէր Ֆրանսիայի դերակատարության և Թուրքիայի՝ բանակցություններից դուրս մնալու հետ: Չնայած այս ամենին՝ վարչապետ Փաշինյանը հանդիպեց Եվրոպայի առաջնորդների հետ, որի արդյունքում նրանք հանդես եկան համատեղ հայտարարությամբ՝ ընդգծելով հարաբերությունների կարգավորման անհրաժեշտությունը և բռնությունից զերծ մնալու պարտավորությունը:

2023 թվականի դեկտեմբերին հուսադրող առաջխաղացման համատեքստում Հայաստանն ու Ադրբեջանը հանդես եկան անկախ համատեղ հայտարարությամբ, որն առաջինն էր խաղաղության այս գործընթացում՝ առանց որևէ արտաքին միջնորդի ներգրավվածության: Հայտարարության մեջ նրանք համոզմունք հայտնեցին, որ տարածաշրջանում առկա է հարատև խաղաղության հասնելու բացառիկ հնարավորություն: Երկու կողմերն էլ համաձայնեցին աշխատել հարաբերությունների կարգավորման և խաղաղության պայմանագրի հասնելու ուղղությամբ՝ հարգելով միմյանց ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը: Նրանք հայտարարեցին ռազմագերիների փոխանակման մասին՝ 32 հայ կալանավորված զինվորի փոխանակելով 2 ադրբեջանցի զինվորի հետ, ինչն արագ իրականացվեց: Այս քայլը ողջունվեց ԵՄ-ի և ԱՄՆ-ի կողմից, որոնք երկար ժամանակ խրախուսում էին խաղաղության պայմանագիրը՝ չլուծված խնդիրները, այդ թվում՝ սահմանների դեմարկացիայի հարցը լուծելու համար:

Այնուամենայնիվ, 2023 թվականի վերջի դրությամբ ԵՄ-ի, ԱՄՆ-ի կամ Ռուսաստանի ղեկավարությամբ պաշտոնական բանակցությունները դեռևս չէին վերսկսվել: Սա վկայում է իրավիճակի շարունակական բարդության և Լեռնային Ղարաբաղի երկարատև հակամարտության կարգավորման ուղղությամբ ջանքերի գործադրումը շարունակելու մասին:

Հայաստան-Ադրբեջան բանակցությունների վիճարկվող շրջանակը

Հայաստանի և Ադրբեջանի միջև երկարաժամկետ խաղաղության պայմանագրի ապահովումը բարդ գործընթաց է, որը մեծապես պայմանավորված է հակամարտության առարկայի, բնույթի և զարգացման վերաբերյալ նրանց տարբերվող մեկնաբանություններով: Բաքուն պնդում է, որ ղարաբաղյան հակամարտությունն ավարտվել է և կոչ է անում ցանկացած մնացած հարց լուծել բանակցությունների միջոցով: Փոխարենը՝ Երևանը մտահոգված է Ադրբեջանի կողմից հնարավոր նոր էսկալացիաներով, հատկապես՝ դեպի Նախիջևանի ադրբեջանական էքսկլավ ցամաքային միջանցքի ստեղծման շուրջ:

Հայաստանում Կառավարության վրա հասարակական ուժեղ ճնշումներ են գործադրվում՝ Ղարաբաղի հայերի իրավունքները տարածաշրջանային երկարաժամկետ խաղաղության հաստատման գործընթացում որպես առանցքային ընդունելու համար: Բացի դրանից, հայ հասարակությունն ակնկալում է, որ Կառավարությունը նախապայմաններ կսահմանի խաղաղ բանակցությունների համար, ինչպես օրինակ՝ բոլոր ռազմագերիների վերադարձը և հայկական տարածքներից ադրբեջանական զորքերի դուրսբերումը: Պաշտոնական Երևանը պնդում է, որ խաղաղության ցանկացած պայմանագիր պետք է ներառի սահմանների դելիմիտացիայի կոնկրետ մեխանիզմ՝ առաջարկելով օգտագործել խորհրդային վերջին ժամանակաշրջանի ռազմական քարտեզները, որոնք, ըստ առկա տեղեկությունների, հավանության են արժանացել Եվրոպական միության կողմից: Սակայն այդ առաջարկը Բաքվի կողմից չի ընդունվում: Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի արտաքին քաղաքականության հարցերով ավագ խորհրդական Հիքմեթ Հաջիևը հայտնել է, որ Ադրբեջանը նախընտրում է սահմանների դելիմիտացիայի հարցերը լուծել խաղաղության պայմանագրի շուրջ քննարկումներից առանձին: Բանակցություններում այս դիրքորոշումը հանդիսանում է տարաձայնությունների լուրջ առարկա, որն ընդգծում է երկու երկրների առաջնահերթությունների և դիրքորոշումների միջև արմատացած տարբերությունները:

Այս տեսակետների և հասարակական ակնկալիքների տարբերությունները զգալի անորոշություն են առաջացնում ինչպես հավանական խաղաղության պայմանագրի էության, այնպես էլ դրա արդյունավետության հարցում: Մտահոգություններն այն մասին, թե պայմանագիրն ինչպիսի ազդեցություն կունենա հակամարտության գոտում

գտնվող մարդկանց կյանքերի վրա և արդյոք այն համապատասխան կերպով կբավարարի նրանց տարատեսակ կարիքներն ու իրավունքները, շարունակում են արդիական մնալ:

Բարդ և անկայուն լանդշաֆտը

Այս համատեքստում, հակամարտությունից տուժած բնակչության մտահոգությունների հասցեագրումը դառնում է առավել քան կենսական: Այս իրավիճակն ընդգծում է նաև խաղաղության այնպիսի համապարփակ պայմանագրի կնքման հրատապ անհրաժեշտությունը, որն արդյունավետորեն կհասցեագրի այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են անվտանգությունը, ինքնությունը, բարեկեցությունը և ազատությունը, որոնք տարածաշրջանում երկարատև կայունության և բարգավաճման համար ունեն կենսական նշանակություն: Մեծաթիվ, սակայն հաճախ ոչ ամբողջությամբ հաղորդվող քաղաքացիական զոհերի և վիրավորումներ ստանալու դեպքերն էլ ավելի են բարդացնում իրավիճակը: Հակամարտության յուրաքանչյուր դրվագ քաղաքացիական անձանց կյանքում լուրջ կորուստներ է բերում, ինչը հանգեցնում է երկարատև հոգեբանական տրավմայի և համատարած հասարակական վշտի: Հակամարտությունը զերծ չէ նաև մարդու իրավունքների բազմաթիվ խախտումներից, այդ թվում՝ վայրագությունների մասին հաղորդումներից, քաղաքացիական բնակավայրերում արգելված զինամթերքի կիրառումից և ռազմագերիների նկատմամբ վատ վերաբերմունքից: Այդ խախտումները խորացնում են առկա լարվածությունը և խոչընդոտում հաշտեցման գործընթացը:

Ավելին, հակամարտությունն առաջացրել է զգալի տնտեսական դժվարություններ քաղաքացիական բնակչության համար, ինչի հետևանքով վնասվել են առանցքային ենթակառուցվածքներ: Այդ ավերածությունները սահմանափակում են հիմնական ծառայությունների հասանելիությունը, խաթարում են կրթությունն ու տարածաշրջանի տնտեսական կայունությունը: Հակամարտությունը վերապրած քաղաքացիական բնակչության, այդ թվում՝ երեխաների վրա հոգեբանական ազդեցությունը շատ խորն է՝ հանգեցնելով լուրջ հոգեբանական տրավմաների և հոգեկան առողջության խնդիրների: Այս մարդասիրական խնդիրների լուծումը կենսական նշանակություն ունի ոչ միայն տուժած բնակչության հրատապ բարեկեցության, այլ նաև տարածաշրջանում խաղաղության և կայունության երկարաժամկետ հեռանկարների հաստատման համար:

Խաղաղության հաստատման ջանքերի տասնամյակների փորձը ցույց է տվել, որ այս հիմնարար խնդիրները պետք է լուծվեն հարատև խաղաղության պայմանագրերի միջոցով: Վիճակագրությունը ցույց է տալիս խաղաղության գործընթացների անհանգստացնող օրինաչափություն, երբ մակերեսային պայմանավորվածությունների պատճառով դրանք վերաճում են բռնության: Այս ռիսկը և քաղաքականության մարտահրավերն ընկած են սույն հետազոտության հիմքում, այն է՝ խաղաղության ոչ լիարժեք պայմանագրերի հետևանքով հակամարտության վերսկսման վտանգը: 2020 թվականի նոյեմբերի 10-ի հրադադարի հայտարարությունը ցույց է տալիս խաղաղության ոչ լիարժեք պայմանագրերի թերությունները, որոնք չեն վերացնում առավել խոր հասարակական վերքերն ու վիրավորանքները:



Ուսումնասիրության նպատակները

«Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն, Եվրոպական միության աջակցությամբ, ադրբեջանական գործընկերների հետ համատեղ իրականացրել է **«Մարդկանց ձայնը. հակամարտության հետևանքով տուժած հասարակությունների կարիքների հասցեագրումը Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության հաստատմանն ուղղված ջանքերում»** խորագրով համապարփակ, կարիքահեն նախնական ուսումնասիրություն: Սույն ուսումնասիրության նպատակն է վերհանել և հասկանալ հայ-ադրբեջանական հակամարտությունից տուժած տարբեր խմբերի հիմնական կարիքները: Դրա շրջանակներում մանրամասն ուսումնասիրվում են այն կարիքներն ու մտավախությունները, որոնք ձևավորում են հասարակական տեսակետները և ուրվագծում այդ խնդիրների լուծմանն ուղղված գործուն ծրագրերը:

Ուսումնասիրությամբ վերհանվում են նաև արժանապատիվ խաղաղության մասին հասարակական ընկալումների վրա ազդող կոնկրետ սպառնալիքները, ինչպես նաև մշակվում են այդ մտահոգությունների հասցեագրման համար անհատականացված առաջարկությունները: Ընդունելով, որ վերհանված յուրաքանչյուր խնդիր հավանական պայմանագրով կարող է չստանալ իր լուծումը, «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն ձգտում է խթանել մարդակենտրոն, կարիքահեն մոտեցումը՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև բարդ հակամարտության հարցում երկարաժամկետ քաղաքական լուծման հասնելու համար:

Սույն զեկույցում ներկայացվում են Լեռնային Ղարաբաղից տեղահանված և Հայաստանում ապաստան գտած անձանց հետ անցկացված՝ ստանդարտացված հարցազրույցների արդյունքները: Այն ներառում է 2023 թվականի սեպտեմբերին զանգվածային արտագաղթի ժամանակ տեղահանված անձանց տեսակետները:

Ծրագրի հաջողությունը մեծապես պայմանավորված է Լոնդոնում տեղակայված «Հաշտեցման ռեսուրսներ» կազմակերպության և Հելսինկիում տեղակայված Ճգնաժամային կառավարման նախաձեռնության (ՃԿՆ. Մարտի Ահտիսաարիի խաղաղության հիմնադրամ) ակտիվ աջակցությամբ: Ճգնաժամային կառավարման նախաձեռնությունը մեծապես աջակցել է «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ին՝ հավաքագրված տվյալները վերլուծելու գործում:

Մեթոդաբանությունը և տեսական շրջանակը

Սույն նախնական ուսումնասիրության մեթոդաբանությունը մշակվել է այնպիսի ճշգրտությամբ, որպեսզի հնարավոր լինի բազմակողմանի պատկերացում կազմել ռեսպոնդենտների՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև կայուն ու արժանապատիվ խաղաղության վերաբերյալ տեսակետների առնչությամբ նրանց հիմնական կարիքների մասին: **Ուսումնասիրությունը ներառում է 106 հարցազրույց, որոնք անցկացվել են 3 վերապատրաստված հարցազրուցավարների կողմից՝ Լեռնային Ղարաբաղից տեղահանված և Հայաստանի տարբեր մարզերում ապաստան գտած անձանց հետ:**

Ընտրանքի մեթոդաբանությունը

Սույն ուսումնասիրությունը մեթոդական առումով այնպես է մշակված, որպեսզի հնարավոր լինի ուսումնասիրել տարբեր աշխարհագրական և ժողովրդագրական միջավայրերում բնակչության կոնկրետ կարիքները: Այս հատուկ կատեգորիաներն ուսումնասիրելու նպատակն էր՝ հստակ պատկերացում կազմել այն մասին, թե ինչպես է հակամարտության գոտիների և տարբեր կենսամիջավայրերին մոտ գտնվելն ազդում տվյալ բնակչության կարիքների և տեսակետների վրա: Բացի դրանից, ուսումնասիրությունը նպատակ ուներ վերհանելու տարբեր ժողովրդագրական խմբերի տարատեսակ կարիքները, այդ թվում՝ գենդերային, զբաղվածության և տարիքային տարբերությունները:

Մեթոդաբանության տեսանկյունից ուսումնասիրությունն իրականացվել է ձնագնդիի մեթոդով՝ հավանականության վրա չհիմնված մոտեցմամբ, որը նպատակահարմար է ուսումնասիրության եզակի ուղղվածության և ռեսուրսների սահմանափակ լինելու տեսանկյունից: Նշված մեթոդի միջոցով ներգրավվում են նախապես ընտրված մասնակիցներ, որոնք իրենց ծանոթների շրջանակից հավաքագրում են այլ մասնակիցների՝ ստեղծելով ուղղորդումների շղթա: Թեև այս տեխնիկան արդյունավետ է կոնկրետ խմբերի ընդգրկման առումով, այնուամենայնիվ դրանով ամբողջությամբ հնարավոր չի հավաքագրել տարատեսակ տեսակետների շրջանակը, քանի որ այն ստեղծում է առկա ծանոթների շրջանակի վրա հիմնված ընտրանք: Այսպիսով, թեև ուսումնասիրության արդյունքները կարող են ինֆորմատիվ լինել, այնուամենայնիվ դրանք պետք է արտարկել զգուշորեն, քանի որ կարող են բնակչության լայն շրջանակների համար ամբողջությամբ ներկայացուցչական չլինել:

Տվյալների հավաքագրման տեխնիկաները

30-40 րոպե տևողությամբ հարցազրույցներն անցկացվել են 21 հարցից բաղկացած ստանդարտացված հարցաշարի միջոցով: Սահմանված ձևաչափով այս մոտեցումը կիրառելու հիմնավորումը մանրամասն ներկայացված է ստորև բերված տեսական շրջանակի բաժնում:

Վերլուծության մեթոդը

Տվյալները վերլուծվել են «Inclus» գործիքի[iv] օգնությամբ, որը մշակվել է խաղաղության հաստատման բարդ միջնորդական գործընթացների արդյունքում՝ Խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր՝ նախագահ Մարտի Ահտիսաարիի Ճգնաժամային կառավարման նախաձեռնության (ՃԿՆ) նախկին աշխատողների կողմից: Այս գործիքը նախատեսված է ընդհանուր շահերը, սպառնալիքներն ու անորոշությունները

վերհանելու և վերլուծելու համար, ինչը կնպաստի խաղաղության գործընթացի առաջընթացին:

Տեսական շրջանակը

Կարիքահեն մոտեցումը. ուսումնասիրությունը հիմնված է Յոհան Գալթունգի՝ «Մարդու հիմնարար կարիքների տիպաբանության» վրա[v], համաձայն որի՝ կարիքները դասակարգվում են *անվտանգության, բարեկեցության, ազատության և ինքնության* կատեգորիաների ներքո ընկնող կարիքների: Այս մոտեցումը նպաստել է հասարակության ակնկալիքների և հակամարտությունների կարգավորման գործընթացներին ներհատուկ հակասությունների առավել խոր ըմբռնմանը՝ ընդգծելով հակամարտությունների կարգավորման ռազմավարությունները հակամարտությունների հիմքում ընկած աղբյուրների հետ համապատասխանեցնելու անհրաժեշտությունը: Այս կարիքների վերհանումը գերկարևոր էր դրանց հասցեագրման նպատակով գործնական, բազմաշերտ առաջարկություններ մշակելու համար:

Բնակչության կարիքների և մտավախությունների վերհանումը (ԴԾԿ մոդելը). ԴԾԿ (Դիրքորոշումներ, շահեր, կարիքներ) մոդելը[vi] սույն ուսումնասիրության մեկ այլ հիմնարար տեսական սկզբունք է, որն օգնում է հասկանալ հակամարտության հիմքում ընկած դինամիկան՝ ուսումնասիրելով ներգրավված կողմերի տեսակետները: Հիմնական կարիքները կազմում են հասարակության շահերի հիմքը, որն իր հերթին ազդում է անհատական դիրքորոշումների վրա: Այս մոտեցմամբ ուսումնասիրությունը նպատակ ուներ առավել մանրամասն ուսումնասիրել այդ դիրքորոշումների հիմքում ընկած հույզերը, դրդապատճառներն ու կարիքները՝ այդպիսով երկարաժամկետ հեռանկարում նպատակ ունենալով նպաստել հակամարտող կողմերի միջև արդյունավետ հաղորդակցությանն ու երկխոսությանը: ԴԾԿ մոդելն օգնեց նաև բացահայտել փոխզիջման ընդհանուր հիմքերն ու հնարավոր ոլորտները՝ ուշադրությունն արմատավորված դիրքորոշումներից տեղափոխելով դեպի ընդհանուր շահերի և դրանց հիմքում ընկած կարիքների վրա:

Մարդու անվտանգության հայեցակարգը. այս հայեցակարգը ձևավորել է երրորդ տեսական հենասյունը, որը հնարավորություն է տալիս Մարդու անվտանգության հայեցակարգի շրջանակներում վերհանել հիմնարար կարիքները: Որպես երրորդ տեսական հենասյուն՝ Մարդու անվտանգության հայեցակարգը կարևոր նշանակություն է ունեցել հակամարտություններից տուժած հասարակություններում հիմնարար կարիքների վերհանման գործում: Այս կարիքները դասակարգվել և բաժանվել են՝ ըստ Մարդու անվտանգության հայեցակարգի, ինչը հնարավորություն է տվել առավել խոր պատկերացում կազմել մասնակիցների դիրքորոշումները ձևավորող հատուկ կարիքների մասին: Ռեսպոնդենտներին առաջադրանք է տրվել 0-ից 10 սանդղակով գնահատել նախապես առանձնացված 21 սպառնալիքների ազդեցությունը, որոնք դասակարգվել են չորս հիմնական խմբերի, այն է՝ անվտանգության, բարեկեցության, ազատության և ինքնության հետ կապված սպառնալիքները:

Ուսումնասիրության սահմանափակումները

- Ուսումնասիրությունն ամբողջությամբ ներկայացուցչական չէ և արտացոլում է միայն հարցազրույցին մասնակցած անձանց տեսակետները:
- Ռեսպոնդենտների սուբյեկտիվ ընկալումները կարող էին ներազդած լինել նրանց կողմից հիմնական եզրույթների՝ անվտանգության, մարդու իրավունքների, ժողովրդավարության կամ ինքնության ըմբռնման վրա:

Վերոնշյալ մեթոդաբանության շնորհիվ ուսումնասիրությունը խաղաղության և հակամարտությունների բարդ դինամիկայի վերաբերյալ տալիս է կարևոր գաղափարներ՝ հաշվի առնելով տարածաշրջանում մարդկանց տարբեր խմբերի տեսակետները:



Խաղաղության հետ կապված սպառնալիքները. ընկալումներն ու գնահատականները

Նախնական ուսումնասիրության ժողովրդագրությունը

Ուսումնասիրությունը ներառել է 106 հարցազրույց, որոնք անցկացվել են Հայաստանի բոլոր մարզերում, այդ թվում՝ մայրաքաղաք Երևանում: Ռեսպոնդենտները նշել են նաև Լեռնային Ղարաբաղում իրենց բնակության վայրը՝ 33-ը սահմանամերձ գյուղական բնակավայրերից, 34-ը՝ սահմանամերձ քաղաքային բնակավայրերից, 26-ը՝ ոչ սահմանամերձ գյուղական բնակավայրերից, իսկ 13-ը՝ ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայրերից: Ըստ գենդերային բաշխվածության մասնակցել է 38 տղամարդ և 68 կին:

Զբաղվածության տեսանկյունից ռեսպոնդենտները տարբերվել են. 6-ն աշխատել են պետական հիմնարկներում, 5-ը՝ տեղական ինքնակառավարման մարմիններում, 44-ն աշխատել են մասնավոր կամ պետական հատվածում, 30-ը եղել են գործազուրկ, 6-ը՝ ուսանող, 9-ը՝ կենսաթոշակառու, իսկ մյուս 6-ը դասակարգվել են այլ կատեգորիաների:

Ուսումնասիրության մեջ ընդգրկվել են բոլոր տարիքային խմբերը. 40 հոգի՝ 18-30 տարեկան, 32 հոգի՝ 30-45 տարեկան, 24 հոգի՝ 45-60 տարեկան և 10 հոգի՝ 60 տարեկանից բարձր:

Գծապակեր 1. Հարցազրույցի մասնակիցների բաշխվածությունը՝ ըստ Լեռնային Ղարաբաղում նախկին բնակավայրերի



Գծապատկեր 2. Գենդերային բաշխվածությունը



Գծապատկեր 3. Ոլորտային բաշխվածությունը





Գծապատկեր 4. Տարիքային խմբի բաշխվածությունը



Ռեսպոնդենտներին իրենց նախընտրությամբ տրվել է հարցազրույցի անցկացման երկու տարբերակ՝ արդյո՞ք նրանք նախընտրում են Հայաստանում մնալ, թե նախընտրում են իրենց «տուն» վերադառնալ: Նրանցից 44-ը հայտնել է Հայաստանում մնալու իր որոշման մասին, 36-ը նախընտրել է «տուն» վերադառնալ, իսկ 26-ն ընտրել է այլ տարբերակ:

Այնուհետև, ռեսպոնդենտներին առաջադրանք է տրվել 0-ից 10 սանդղակով գնահատել տարբեր սպառնալիքների ազդեցությունը կա՛մ Ադրբեջանի և Հայաստանի միջև երկարաժամկետ ու արժանապատիվ խաղաղության զարգացման վրա (նրանց դեպքում, ովքեր ընտրել էին Հայաստանում մնալ), կա՛մ Լեռնային Ղարաբաղ նրանց վերադարձի վրա (հարցաթերթում նշված է որպես «տուն»): Այդ սանդղակում 1 գնահատականը ցույց է տալիս, որ սպառնալիքն ընդհանրապես նշանակություն չունի, իսկ 10-ը՝ այն շատ մեծ նշանակություն ունի: Առանձնացված 21 սպառնալիքները դասակարգվել են չորս հիմնական խմբերի՝ *անվտանգության*, *բարեկեցության*, *ազատության* և *ինքնության* հետ կապված սպառնալիքներ:

Անվտանգության կատեգորիա

1. Ֆիզիկական գոյության հետ կապված սպառնալիքներ (բռնության, պատերազմական, ահաբեկչական արարքներ կամ ագրեսիայի ցանկացած ձև, որոնք ուղղակիորեն վտանգում են մարդկանց բարեկեցությունը կամ վնասում նրանց գույքը):
2. Տնտեսական սպառնալիքներ (ֆինանսական անկայունություն, աղքատություն կամ առևտրի ու կոմերցիայի խափանումներ, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ մարդկանց և հասարակությունների տնտեսական բարեկեցության վրա):
3. Կիբեռանվտանգության սպառնալիքներ (չթույլատրված հասանելիություն, հաքերային հարձակումներ, տվյալների արտահոսք, ինքնության գողություն և այլ վնասակար գործողություններ, որոնք թիրախավորում են համակարգչային

համակարգերը, ցանցերը կամ առցանց հարթակները՝ վտանգի ենթարկելով թվային անվտանգությունն ու գաղտնիությունը):

4. Բնապահպանական սպառնալիքներ (բնական աղետների, կլիմայի փոփոխության, աղտոտման, անտառահատումների և այլ գործոնների հետ կապված ռիսկեր, որոնք խնդիրներ են ստեղծում էկոհամակարգերի առողջության և բնական ռեսուրսների կայուն օգտագործման համար):
5. Քաղաքական և սոցիալական սպառնալիքներ (քաղաքական կայունությանն ուղղված մարտահրավերներ, ինչպիսիք են քաղաքական խռովությունները, կոռուպցիան, սոցիալական ցնցումները, գաղափարական հակասությունները և մարդու իրավունքների խախտումները, որոնք կարող են խաթարել սոցիալական համերաշխությունը և մարդկանց ու համայնքների բարեկեցությունը):

<u>Բարեկեցության կատեգորիա</u>

6. Բարեկեցության և ֆինանսական կայունության հետ կապված սպառնալիքներ (սոցիալական բացառում, անհավասարություն):
7. Բավարար կենսամակարդակի հետ կապված սպառնալիքներ (հիմնական ծառայությունների հասանելիության բացակայություն, ինչպիսիք են բնակարանային ապահովումը, սնունդը, էլեկտրաէներգիան, գազը, ջուրը և կենսապահովման այլ կարիքներ):
8. Կայուն զբաղվածության հետ կապված սպառնալիքներ (աշխատանքի սահմանափակ հնարավորություններ կամ կայուն ու արժանապատիվ աշխատանք գտնելու անկարողություն, ինչը հանգեցնում է ֆինանսական սթրեսի, ռեսուրսների հասանելիության նվազմանը և ընդհանուր բարեկեցության մակարդակի իջեցմանը):
9. Սոցիալական ապահովության հետ կապված սպառնալիքներ (ոչ բավարար մակարդակի առողջապահական ծառայություններ, սոցիալական աջակցության ծրագրեր և կենսաթոշակային համակարգեր, որոնք մարդկանց ու համայնքներին անհրաժեշտ աջակցություն չեն տրամադրում):
10. Հնարավոր կրթության իրավունքի իրացման և հմտությունների զարգացման հետ կապված սպառնալիքներ (որակյալ կրթության և հմտությունների զարգացման սահմանափակ հնարավորություններ, որոնք խոչընդոտում են անձնական աճը և սոցիալ-տնտեսական զարգացումը):
11. Առողջության պահպանման անհավասարության սպառնալիքներ (մաքուր ջրի ոչ բավարար հասանելիություն, ոչ բավարար սանիտարական պայմաններ, վարակիչ հիվանդությունների տարածում կամ թերսնուցում):

<u>Ազատության կատեգորիա</u>

12. Ժողովրդավարության և ազատության հետ կապված սպառնալիքներ (կառավարությունների կողմից քաղաքական այլախոհությունների ճնշումներ, լրատվության միջոցների անկախության սահմանափակում):
13. Արդյունավետ ժողովրդավարական կառավարման հետ կապված սպառնալիքներ (թերի կամ կոռումպացված ժողովրդավարական կառույցներ, կառավարման գործընթացում թափանցիկության և հաշվետվողականության բացակայություն և սահմանափակ քաղաքական մասնակցություն, որոնք խաթարում են ժողովրդավարական գործընթացը և սահմանափակում որոշումների կայացման գործընթացում քաղաքացիների գիտակցված ներգրավվման կարողությունը):
14. Խոսքի ազատության հետ կապված սպառնալիքներ (արտահայտվելու ազատության, այդ թվում՝ գրաքննության նկատմամբ կիրառվող սահմանափակումներ, լրագրողների ահաբեկումներ, լրատվության միջոցների նկատմամբ առցանց հսկողությունը և վերահսկողությունը, անձանց՝ իրենց կարծիքն արտահայտելու, տեղեկատվություն տարածելու և հանրային խոսույթին մասնակցելու հնարավորությունների սահմանափակում):



15. Մարդու իրավունքների խախտման սպառնալիքներ (խոշտանգում, կամայական կալանավորում, խտրականություն և հետապնդում, որոնք ոտնահարում են մարդու հիմնարար իրավունքները՝ վտանգելով նրա ազատությունը և խոչընդոտելով նրա կողմից անձնական նպատակների իրագործումը):
16. Քաղաքացիական ազատությունների հետ կապված սպառնալիքներ (քաղաքացիական այնպիսի ազատությունների սահմանափակումներ, ինչպիսիք են հավաքների, միավորումներ կազմելու ազատությունը և խաղաղ բողոքները, որոնք խոչընդոտում են քաղաքացիների՝ իրենց իրավունքներն իրացնելու և իրենց մտահոգությունները բարձրաձայնելու կարողությունը):
17. Սոցիալական և մշակութային ճնշումների սպառնալիքներ (սոցիալական նորմեր, ավանդույթներ ու մշակութային նորմեր, որոնք խտրականություն են դնում հատուկ խմբերի, այդ թվում՝ կանանց, փոքրամասնությունների կամ մարգինալացված համայնքների միջև և ամրապնդում են խտրականությունը, նախապաշարմունքները և սոցիալական բացառումը՝ խաթարելով բոլորի համար հավասար ազատության սկզբունքը):

<u>Ինքնության կատեգորիա</u>

18. Հավասարության, ներառականության և անկողմնակալության հետ կապված սպառնալիքներ (խտրականություն, նախապաշարմունք, սոցիալական բացառում, ռասայի, էթնիկական ծագման, կրոնի, գենդերի, սեռական կողմնորոշման կամ ինքնության այլ ասպեկտների հիմքով խտրականություն, ինչպես նաև անձանց կամ խմբերին սոցիալական, քաղաքական կամ տնտեսական հնարավորություններից զրկում՝ նրանց ինքնության հիմքով):
19. Մշակութային բազմազանության և ժառանգության պահպանման հետ կապված սպառնալիքներ (մշակութային ձուլում) (ճնշման գործադրում՝ գերիշխող մշակութային նորմերին ու արժեքներին համապատասխանեցման նպատակով, սեփական մշակութային ինքնության և մշակութային ժառանգության ոչնչացման հաշվին):
20. Ինքնության ճնշման սպառնալիքներ (անձանց կամ խմբերին իրենց մշակութային, լեզվական կամ կրոնական ինքնությունն արտահայտելու արգելում կամ սահմանափակում, ինչը խաթարում է բազմազանությունը և ոչնչացնում մշակութային ժառանգության հարստությունը):
21. Կարծրատիպերի վերագրման ու սխալ ներկայացման սպառնալիքներ (լրատվության միջոցներով, կրթության մեջ կամ հանրային խոսույթում բացասական կարծրատիպերի ձևավորում և սխալ ներկայացում, որոնք ամրապնդում են որոշ ինքնությունների մասին վնասակար նարատիվները՝ նպաստելով խտրականությանն ու կողմնակալությանը):

Ռեսպոնդենտների հիմնական մտահոգությունները

Ռեսպոնդենտների տեսակետները ցույց են տալիս նրանց կողմից խաղաղության կառուցման գործընթացի համապարփակ ընկալումը, որը ներառում է անվտանգությունը, բարեկեցությունը, ազատությունը և ինքնությունը:

Ավելին, յուրաքանչյուր կատեգորիայի համար հաշվարկված միջին գնահատականը տարբերվում է՝ կախված Հայաստանում մնալու որոշում կայացրած, չկողմնորոշված և «տուն» վերադառնալ նախընտրողների խմբերից: Հարկ է նշել, որ հետագա հաշվարկներում և վերլուծություններում Հայաստանում մնալու որոշում կայացրած խմբի և իրենց հետագա պլաններում չկողմնորոշված խմբերի կարիքները գնահատվել են միասին, իսկ Լեռնային Ղարաբաղ վերադառնալու ցանկություն հայտնած խմբի տվյալները՝ առանձին:

Ուստի, Հայաստանում մնալու որոշում կայացրած և իրենց հետագա պլաններում չկողմնորոշված խմբերի միջին գնահատականները հետևյալն են՝

- անվտանգության կատեգորիա. **միջին գնահատական՝ 7.2:**
- բարեկեցության կատեգորիա. **միջին գնահատական՝ 7.2:**
- ազատության կատեգորիա. **միջին գնահատական՝ 7.4:**
- ինքնության կատեգորիա. **միջին գնահատական՝ 7.9:**

Լեռնային Ղարաբաղ վերադառնալու ցանկություն հայտնած խմբի միջին գնահատականները հետևյալն են՝

- անվտանգության կատեգորիա. **միջին գնահատական՝ 8.4:**
- բարեկեցության կատեգորիա. **միջին գնահատական՝ 8.3:**
- ազատության կատեգորիա. **միջին գնահատական՝ 8.8**:
- ինքնության կատեգորիա. **միջին գնահատական՝ 9.1:**

Տվյալները ցույց են տալիս, որ Լեռնային Ղարաբաղ վերադառնալու ցանկություն հայտնած խումբը բոլոր կատեգորիաները գնահատել է ավելի բարձր, քան Հայաստանում մնալու որոշում կայացրած կամ չկողմնորոշված անձանց խմբերը: Պոտենցիալ վերադարձողների շրջանում այս առավել բարձր գնահատականները ցույց են տալիս, որ նրանք առավել մեծ սպառնալիք են տեսնում իրենց անվտանգության, բարեկեցության, ազատության և ինքնության համար: Սա ընդգծում է ինչպես նրանց լուրջ մտահոգությունները, այնպես էլ հատուկ կարիքներին հարմարեցված՝ նպատակաուղղված աջակցության ու միջամտությունների անհրաժեշտությունը:

Գծապատկեր 5. Հայաստանում մնալու որոշում կայացրած, իրենց հետագա պլաններում չկողմնորոշված և Լեռնային Ղարաբաղ վերադառնալու ցանկություն հայտնած խմբերի միջին գնահատականներն ըստ կատեգորիայի

Կմնան Հայաստանում կամ չեն կողմնորոշվում ապագայի հետ կապված

Անվտանգություն 10-ից 7.2	Բարեկեցություն 10-ից 7.2
Ազատություն 10-ից 7.4	Ինքնություն 10-ից 7.9

Կնախընտրեն «տուն» վերադառնալ

Անվտանգություն 10-ից 8.4	Բարեկեցություն 10-ից 8.3
Ազատություն 10-ից 8.8	Ինքնություն 10-ից 9.1



Հարկ է նշել, որ երկու խմբերի կողմից բոլոր կատեգորիաների մեջ ինքնությանը տրվել է ամենաբարձր միջին գնահատականը, ինչն արտացոլում է բոլոր ռեսպոնդենտների համար դրա կենսական նշանակությունը: Բացի ինքնության հետ կապված կարիքներից, երկու խմբերն էլ առաջնահերթություն են տալիս ազատության հետ կապված կարիքներին:

Ըստ յուրաքանչյուր կատեգորիայի միջին գնահատականների՝ Հայաստանում մնալու պլաններ ունեցող կամ հետագա պլաններում չկողմնորոշված խմբում առաջնահերթությունները հետևյալն են.

Անվտանգության կատեգորիա (միջին գնահատական՝ 7.2)

- *Ֆիզիկական սպառնալիքներ (8.3)*. ամենաբարձր գնահատական ստացած ենթակատեգորիան է, որը վկայում է բռնության, պատերազմի և ագրեսիայի առնչությամբ ծայրահեղ մտահոգության մասին:
- *Քաղաքական և սոցիալական սպառնալիքները (7.6)*. այս ենթակատեգորիան նույնպես ստացել է բարձր գնահատական, որը ցույց է տալիս քաղաքական կայունության հետ կապված մարտահրավերների և մարդու իրավունքների խախտումների առնչությամբ նկատելի անհանգստությունը, որոնք կարող են խաթարել սոցիալական համերաշխությունը և մարդկանց ու համայնքների բարեկեցությունը:

Բարեկեցության կատեգորիա (միջին գնահատական՝ 7.2)

- *Բավարար կենսամակարդակի հետ կապված սպառնալիքներ (7.5).* ցույց է տալիս այնպիսի հիմնական ծառայությունների հասանելիության բացակայությունը, ինչպիսիք են բնակարանային ապահովումը, սնունդը, էլեկտրաէներգիան, գազը, ջուրը և կենսապահովման այլ կարիքներ:

Ազատության կատեգորիա (միջին գնահատական՝ 7.4)

- *Արդյունավետ ժողովրդավարական կառավարման հետ կապված սպառնալիքներ (7.7)*. այս պոտենցիալ սպառնալիքը «Ազատություն» կատեգորիայում ամենամեծ մտահոգությունն է՝ ընդգծելով արդյունավետ ժողովրդավարական կառավարման հետ կապված սպառնալիքները: Սա ներառում է թերի կամ կոռումպացված ժողովրդավարական կառույցները, կառավարման գործընթացում թափանցիկության և հաշվետվողականության բացակայությունը և սահմանափակ քաղաքական մասնակցությունը, որոնք բոլորն էլ խաթարում են ժողովրդավարական գործընթացը և սահմանափակում որոշումների կայացման գործընթացում քաղաքացիների գիտակցված ներգրավվման կարողությունը:

Ինքնության կատեգորիա (միջին գնահատական՝ 7.9)

- *Կարծրատիպերի վերագրման ու սխալ ներկայացման սպառնալիքներ (8.2).* «Ինքնություն» կատեգորիայի ներքո ամենակարևորված ենթակատեգորիան է, որտեղ ուժեղ շեշտադրվում է լրատվության միջոցներով, կրթության մեջ և հանրային խոսույթում բացասական կարծրատիպերի և սխալ ներկայացման հարցը:
- *Ինքնության ճնշման սպառնալիքներ (8.0).* անձանց կամ խմբերին իրենց մշակութային, լեզվական կամ կրոնական ինքնությունն արտահայտելու արգելման կամ սահմանափակման առնչությամբ մտահոգություններ:
- *Մշակութային բազմազանության և ժառանգության պահպանման հետ կապված սպառնալիքներ (8.0).* վերաբերում է մշակութային ձուլման առնչությամբ մտահոգություններին:

Լեռնային Ղարաբաղ վերադառնալու պատրաստակամություն հայտնող ռեսպոնդենտների շրջանում մտահոգությունները հետևյալն են՝

Անվտանգության կատեգորիա (միջին գնահատական՝ 8.4). թեև այս կատեգորիան ստացել է ամենաբարձր գնահատականը, այնուամենայնիվ, այն երրորդ ամենաքիչ կարևորված կատեգորիան է: Վերջինիս շրջանակներում կոնկրետ մտահոգությունները հետևյալն են՝

- *Ֆիզիկական սպառնալիքներ (9.1).* սա ցույց է տալիս բռնության, պատերազմի և ագրեսիայի առնչությամբ առկա չափազանց մեծ մտահոգությունը:
- *Քաղաքական և սոցիալական սպառնալիքներ (9.1).* ինչպես նախորդ խումբը, այնպես էլ այս խումբը «Անվտանգություն» կատեգորիայում ամենաբարձր գնահատական ստացած ենթակատեգորիան էր: Այնուամենայնիվ, ինչ վերաբերում է այս խմբին, այն առաջին հերթին արտացոլում է ադրբեջանական պետության ու արդարադատության համակարգի նկատմամբ անվստահությունը: Ռեսպոնդենտները նշել են, որ Ադրբեջանի կողմից կառավարվող Լեռնային Ղարաբաղ վերադարձի դեպքում իրենց կվերաբերվեն որպես երկրորդ կարգի քաղաքացիների:

Բարեկեցության կատեգորիա (միջին գնահատական՝ 8.3)

- *Հնարավոր կրթության իրավունքի իրացման և հմտությունների զարգացման հետ կապված սպառնալիքներ (8.8).* ամենաբարձր գնահատականը ստացած ենթակատեգորիան է, որում ընդգծվում է հայերենով կրթություն ստանալու անհնարինության և ադրբեջաներենով կրթություն ստանալուն հարկադրելու հետ կախված մտավախությունները:
- *Բավարար կենսամակարդակի հետ կապված սպառնալիքներ (8.4).* ինչպես նախորդ խումբը, այնպես էլ այս խումբն արտացոլում է հիմնական ծառայությունների հասանելիության և առաջին անհրաժեշտության առարկաների բացակայության հետ կապված մտավախությունները:

Ազատության կատեգորիա (միջին գնահատական՝ 8.8)

- *Ժողովրդավարության, ազատության (9.2) և խոսքի ազատության հետ կապված սպառնալիքներ (9.1).* այս պոտենցիալ սպառնալիքները «Ազատություն» կատեգորիայում ամենաշատ մտահոգություն առաջացրած սպառնալիքներն են, դրանում ընդգծվում են նաև Ադրբեջանում ժողովրդավարության վիճակի հետ կապված անհանգստությունները՝ ռեսպոնդենտների կողմից Լեռնային Ղարաբաղ վերադարձի դեպքում:

Ինքնության կատեգորիա (միջին գնահատական՝ 9.1)

- *Ինքնության ճնշման սպառնալիքներ (9.3).* անձանց կամ խմբերին իրենց ինքնությունն արտահայտելու արգելման կամ սահմանափակման առնչությամբ մտահոգություններ:
- *Մշակութային բազմազանության և ժառանգության պահպանման հետ կապված սպառնալիքներ (9.3).* վերաբերում է մշակութային ձուլման առնչությամբ մտահոգություններին:
  Երկուսն էլ «Ինքնություն» կատեգորիայի ներքո ամենակարևորված ենթակատեգորիաներն են, ինչը վկայում է վերադարձի դեպքում հայոց լեզվից և մշակութային ժառանգությունից հարկադրաբար հրաժարվելու առնչությամբ առկա խիստ մտահոգության մասին:

Ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ երկու խմբերն էլ կիսում են խաղաղության կառուցման վերաբերյալ առկա համապարփակ պատկերացումները՝ մեծապես շեշտը դնելով ինքնության և ազատության վրա: Չնայած տարբեր աստիճանի



ինտենսիվության մտահոգությունների, այնուամենայնիվ, ընդհանուր առաջնահերթություններով ընդգծվում են մշակութային ինքնության պահպանման, արդյունավետ ժողովրդավարական կառավարման, ֆիզիկական ապահովության և բավարար կենսամակարդակի առնչությամբ ընդհանուր մտավախությունները: Այս ընդհանրությունները հուշում են, որ խաղաղության կառուցմանն ու աջակցությանն ուղղված ցանկացած միջամտություն պետք է լուծի այս հիմնական խնդիրները՝ երկու խմբերի կարիքներն արդյունավետորեն բավարարելու համար:

Այնուամենայնիվ, երկու խմբերի միջև հիմնական տարբերությունը նրանց մտահոգությունների ինտենսիվության ու ուղղվածության մեջ է: Լեռնային Ղարաբաղ պոտենցիալ վերադարձողները բոլոր կատեգորիաներում բավականին մեծ մտահոգություն են հայտնում, հատկապես՝ կապված իրենց ինքնության, ժողովրդավարական կառավարման և մշակույթի պահպանության հետ: Փոխարենը՝ Հայաստանում մնալու որոշում կայացրածները կամ չկողմնորոշվածները հայտնում են առավել հավասարակշռված, սակայն ավելի ցածր մտահոգություն՝ կենտրոնանալով ընդհանուր անվտանգության և կենսամակարդակի վրա:

Գծապատկեր 6. Խմբերից յուրաքանչյուրի համար երեք ամենաբարձր միջին գնահատականները՝ ըստ կատեգորիայի

Կմնան Հայաստանում կամ չեն կողմնորոշվում ապագայի հետ կապված



Կնախընտրեն «տուն» վերադառնալ





Հիմնական արդյունքները և հետևությունները. կապերը և օրինաչափությունները

Անվտանգության հետ կապված սպառնալիքների վերլուծությունն ըստ տարածաշրջանային, գենդերային, տարիքային և մասնագիտական խմբերի

Գծապատկեր 7. «Անվտանգություն» կատեգորիայի սպառնալիքների միջին գնահատականը՝ խմբերից յուրաքանչյուրի համար



1. Ֆիզիկական սպառնալիքներ.

Ընդհանուր առմամբ, տվյալները ցույց են տալիս հստակ օրինաչափություն. բոլոր տարածաշրջանային, գենդերային, տարիքային և մասնագիտական խմբերում Լեռնային Ղարաբաղ վերադառնալու պլաններ ունեցողները հայտնում են ֆիզիկական սպառնալիքների առնչությամբ շատ խոր մտահոգություններ: Այս մեծ անհանգստությունը ցույց է տալիս Լեռնային Ղարաբաղ վերադառնալու հետ կապված ենթադրյալ վտանգներն ու անորոշությունները: Նարատիվով ընդգծվում է այդ մտավախությունները հաղթահարելու հարցում նպատակային միջամտությունների ու աջակցության դերի գերկարևորությունը՝ ապահովելով պոտենցիալ վերադարձողների ապահովությունն ու բարեկեցությունը, սակայն միաժամանակ հաշվի առնելով Հայաստանում մնալու ընտրություն կատարածների կամ իրենց պլաններում չկողմնորոշվածների մտահոգությունները:

Տատանումներն ըստ տարածաշրջանների. առաջնագծում գտնվող գյուղական բնակավայրերում Լեռնային Ղարաբաղ վերադառնալու պլաններ ունեցող ռեսպոնդենտներն ավելի մեծ մտահոգություն են հայտնել ֆիզիկական սպառնալիքների առնչությամբ, քան Հայաստանում մնացող ռեսպոնդենտները: Նույն կերպ, առաջնագծում չգտնվող գյուղական բնակավայրերում երկու խմբերն էլ մեծ մտահոգություններ են հայտնել, սակայն «պոտենցիալ վերադարձողները» ֆիզիկական սպառնալիքներին մի փոքր ավելի բարձր գնահատական են տվել: Առավել ընդգծված մտահոգություն նկատվում է առաջնագծում գտնվող քաղաքային բնակավայրերում.

> *«Ես այնպիսի ապագա են պատկերացնում, որտեղ կարող եմ տուն վերադառնալ, սակայն այսօր դա ուղղակի անհնար է: Ինչպե՞ս կարող եմ վերցնել իմ մանկահասակ երեխային և ապրել ադրբեջանցիների շրջանում: Հիմա սա*

> *անհեթեթ է թվում: Գուցե հետագայում դա հնարավոր լինի, սակայն վստահ չեմ կարող ասել»:* (Կին, պետական հատվածի աշխատող, ոչ սահմանամերձ գյուղական բնակավայր, 30-45 տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ):

Գենդերային տեսանկյունը. Թե՛ տղամարդ, թե՛ կին ռեսպոնդենտները մեծ մտահոգություն են հայտնում ֆիզիկական սպառնալիքների առնչությամբ, եթե նրանք պլանավորեն վերադառնալ Լեռնային Ղարաբաղ: «Տուն վերադառնալու» պլաններ ունեցող տղամարդիկ ֆիզիկական սպառնալիքներին տվել են ավելի բարձր գնահատական, քան Հայաստանում մնացող տղամարդիկ: Թեև կանայք նույնպես ավելի մեծ մտահոգություն են հայտնում այս հարցի առնչությամբ, սակայն ոչ այդքան ընդգծված, որքան տղամարդիկ: Սա ցույց է տալիս գենդերային խմբերում ֆիզիկական ապահովության առնչությամբ առկա համընդհանուր մտահոգությունը, թեև տղամարդիկ վերադառնալու առնչությամբ մի փոքր ավելի շատ անհանգստություն են ցուցաբերում:

> *«Իրավիճակը շատ անհասկանալի է և անկայուն: Ըստ իս՝ ֆիզիկական գոյության սպառնալիքը լուրջ է, անկախ դրա կարևորությունը նսեմացնելու ջանքերից»:* (Տղամարդ, պետական հատվածի աշխատող, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, 30-45 տարիքային խումբ, հետագա պլաններում չկողմնորոշված):
>
> *«Ես Հայաստանում պատերազմի հավանականությունը համարում են նույնքան իրական, որքան Ղարաբաղում»:* (Կին, պետական հատվածի աշխատող, սահմանամերձ գյուղական բնակավայր, 45-60 տարիքային խումբ, նախընտրում է Հայաստանում մնալ):

Մտահոգությունները՝ ըստ տարիքային խմբերի. Ֆիզիկական սպառնալիքների առնչությամբ ամենամեծ մտահոգությունը հայտնում են երիտասարդները (18-30 տարիքային խումբ), հատկապես՝ Լեռնային Ղարաբաղ վերադառնալու պլաններ ունեցողները:

> *«Տուն վերադառնալու միակ իրական հնարավորությունը ես տեսնում եմ միջազգային խաղաղապահ ուժերի (ՄԱԿ-ի, ոչ թե ռուս խաղաղապահների) ներկայության դեպքում: Ադրբեջանի զինված ուժերն ու ոստիկանությունը պետք է հեռացվեն Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանից, իսկ Լաչինի ամբողջ միջանցքը պետք է պահպանվի ՄԱԿ-ի խաղաղապահների կամ ԵՄ դիտորդների կողմից, ինչպես Վրաստանի և Հայաստանի դեպքում է [նկատի ունենալով ԵՄՄԱ-ն և ՀԵՄԱ-ն]: Հայերի համար բացարձակ անհնար է վերադառնալ ներկայիս Լեռնային Ղարաբաղ. այն ուղղակի ֆիզիկական վտանգ է ներկայացնում հայերի համար՝ անհարկի դարձնելով մյուս սպառնալիքների մասին քննարկումները»:* (Տղամարդ, սահմանամերձ քաղաքային բնակավայր, տեղական ինքնակառավարման մարմնի աշխատող, 18-30 տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ):

Տուն վերադառնալու պլաններ ունեցող՝ միջին տարիքի ռեսպոնդենտների շրջանում (45-60 տարիքային խումբ) արձանագրվել է նկատելի անհանգստություն, որին տրվել է 9,1 գնահատականը՝ համեմատած Հայաստանում մնացող ռեսպոնդենտների կողմից տրված 7,8 գնահատականի:

> *«Ես գիտեմ, որ եթե վերադառնամ տուն, ապա ինձ անպայման կձերբակալեն, և իմ կյանքը կլինի անմիջական ֆիզիկական վտանգի տակ»:* (Տղամարդ, պետական հատվածի աշխատող, սահմանամերձ գյուղական բնակավայր, 45-60 տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ):

> *«Հայերի վերադարձը Լեռնային Ղարաբաղ հնարավոր է միայն առանց Ադրբեջանի ներկայության: Ռուսները պետք է լինեն այնտեղ անվտանգության երաշխավորը: Շարքային ռուս խաղաղապահները մեղավոր չեն իրենց Կառավարության կողմից տրված հրամանների համար, նրանք պարզապես կատարել են դրանք»:* (Տղամարդ, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, գործազուրկ, 45-60 տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ):
>
> *«Ես իսկապես ուզում են տուն գնալ, սակայն եթե ադրբեջանցիներն այնտեղ լինեն, դա հնարավոր չի լինի: Եթե լինեն անվտանգության լուրջ երաշխիքներ, ապա դա հնարավոր կլինի: Սակայն ներկա պահին ինչպե՞ս կարող եմ վերցնել երեխաներիս և գնամ Ղարաբաղ: Մենք տեսել ենք ռուսների «երաշխիքները», նրանք պարզապես մեզ խաբեցին: Պետք է լինեն անվտանգության այլ երաշխիքներ:»* (Կին, սահմանամերձ գյուղական բնակավայր, մասնավոր կամ պետական հատվածի աշխատող, 45-60 տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ):

Տատանումներն ըստ զբաղվածության. պետական հիմնարկների աշխատողների շրջանում նկատվում է հետաքրքիր օրինաչափություն՝ Հայաստանում մնալու պլաններ ունեցողներն ավելի շատ մտահոգված են ֆիզիկական սպառնալիքներով (միջին գնահատականը՝ 8,8), քան Լեռնային Ղարաբաղ վերադառնալու պլաններ ունեցողները (միջին գնահատականը՝ 7,0): Սա կարող է պայմանավորված լինել անվտանգության պահպանման և կառավարման գործում նրանց ունեցած դերակատարությամբ և պարտականություններով, ինչի պատճառով նրանք ավելի խորն են գիտակցում առկա սպառնալիքները:

> *«Հայերի նկատմամբ էթնիկ ծագման հիմքով անհանդուրժողականությունն ակնհայտ է, և այս առումով ֆիզիկական անվտանգության երաշխիքներ չկան: Մի քանի հայերի ներկայությունը Ղարաբաղում չի փոխում այս իրողությունը»:* (Կին, կառավարության նախկին աշխատող, սահմանամերձ գյուղական բնակավայր, 30-35 տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ):

2. Տնտեսական սպառնալիքներ

Տվյալները հստակ ցույց են տալիս, որ տնտեսական սպառնալիքները լուրջ մտահոգություն են թե՛ Հայաստանում մնալու պլաններ ունեցողների, թե՛ Լեռնային Ղարաբաղ վերադառնալու մտադրություն ունեցողների համար, ընդ որում վերջին խմբի մոտ շատ ավելի մեծ անհանգստություն է դիտարկվում: Այս օրինաչափությունը նկատվում է տարածաշրջանային, գենդերային, տարիքային և մասնագիտական բոլոր խմբերում, թեև մտահոգության ինտենսիվությունը տարբերվում է:

Տատանումներն ըստ տարածաշրջանների. առաջնագծում գտնվող ինչպես գյուղական, այնպես էլ քաղաքային բնակավայրերին, հատկապես «պոտենցիալ վերադարձողների» շրջանում տրվել են տնտեսական սպառնալիքների ավելի բարձր գնահատականներ, ինչը ցույց է տալիս անկայուն բնակավայրերի հետ կապված անորոշություններն ու ռիսկերը:

Գենդերային տեսանկյունը. վերադառնալու պլաններ ունեցող թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք տնտեսական սպառնալիքների առնչությամբ ավելի մեծ մտահոգություն են հայտնում, ընդ որում տղամարդկանց մոտ նկատվում է մի փոքր ավելի մեծ անհանգստություն:

Մտահոգություններն ըստ տարիքային խմբերի. տնտեսական սպառնալիքների առնչությամբ ամենամեծ մտահոգությունը հայտնում են երիտասարդ ռեսպոնդենտները

(18-30 տարիքային խումբ), ինչը ցույց է տալիս աշխատանքի հեռանկարների և ֆինանսական կայունության հետ կապված մտավախությունները: Ավելի մեծ տարիքային խմբերը, հատկապես վերադառնալու պլաններ ունեցողները նույնպես մեծ մտահոգություն են հայտնում:

> *«Ներկայումս ֆինանսական վիճակն անկայուն է, ինչի մասին վկայում են արտագաղթի բարձր ցուցանիշները: Ցավոք, կարծում եմ, որ ֆինանսական վիճակը կշարունակի վատթարանալ»:* (Կին, ուսանող, սահմանամերձ գյուղական բնակավայր, 18-30 տարիքային խումբ, հետագա պլաններում չկողմնորոշված):

Տատանումներն ըստ զբաղվածության. վերադառնալու պլաններ ունեցող՝ Լեռնային Ղարաբաղի պետական հիմնարկների և տեղական ինքնակառավարման մարմինների նախկին աշխատողները տնտեսական սպառնալիքների առնչությամբ չափազանց մեծ մտահոգություն են հայտնում, ինչն ընդգծում է կառավարման գործընթացում և տեղական տնտեսական պայմաններում տիրող անկայունությունը: Գործազուրկ ռեսպոնդենտները նույնպես լուրջ տագնապներ ունեն, ինչը վկայում է տարբեր խմբերում տարածված տնտեսական մտավախությունների մասին:

> *«Մենք նախկինում միասին ապրել ենք և ականատես ենք եղել բազմաթիվ անարդարությունների: Օրինակ՝ ադրբեջանական գյուղերը գազ ունեին, իսկ հայկական գյուղերը՝ ոչ»:* (Տղամարդ, գործազուրկ, սահմանամերձ գյուղական բնակավայր, 45-60 տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ):

3. Կիբեռանվտանգության հետ կապված սպառնալիքներ

Տատանումներն ըստ տարածաշրջանների. առաջնագծում գտնվող ինչպես գյուղական, այնպես էլ քաղաքային բնակավայրերին տրվել են կիբեռանվտանգության հետ կապված սպառնալիքի բարձր գնահատականներ:

Գենդերային տեսանկյունը. վերադառնալու պլաններ ունեցող թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք կիբեռանվտանգության հետ կապված սպառնալիքների առնչությամբ հայտնել են ավելի մեծ մտահոգություններ, ընդ որում՝ տղամարդիկ այս առնչությամբ ունեն մի փոքր ավելի շատ տագնապներ:

> *«Մենք արդեն վերապրել ենք կիբեռսպառնալիքներ Լեռնային Ղարաբաղի շրջափակման ժամանակ: Ադրբեջանցիները նման հարձակումներ պարբերաբար կատարել են և շարունակում են կատարել նույնիսկ հիմա, իսկ ապագայում էլ ավելի շատ հարձակումներ կկատարեն»:* (Տղամարդ, գործազուրկ, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, 45-60 տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ):

Մտահոգություններն ըստ տարիքային խմբերի. կիբեռանվտանգության հետ կապված սպառնալիքների առնչությամբ ամենամեծ մտահոգությունը հայտնում են երիտասարդ ռեսպոնդենտները (18-30 տարիքային խումբ), ինչը վկայում է թվային համակարգերը չթույլատրված մուտքից պաշտպանելու անկարողության և տեխնոլոգիաներից կախվածության մասին:

> *«Ես դեռևս հիշում եմ Ղարաբաղից, երբ կոտրեցին ընկերոջս ֆեյսբուքյան էջը և ապատեղեկատվություն տարածեցին՝ ստեղծելով խուճապ և առաջարկելով հայերին փախչել»:* (Կին, ուսանող, սահմանամերձ գյուղական բնակավայր, 18-30 տարիքային խումբ, հետագա պլաններում չկողմնորոշված):

Տատանումներն ըստ զբաղվածության. վերադառնալու պլաններ ունեցող՝ պետական հիմնարկների նախկին աշխատողներն ու ուսանողները

կիբեռանվտանգության հետ կապված սպառնալիքների առնչությամբ չափազանց մեծ մտահոգություն են հայտնում, ինչն ընդգծում է թվային անվտանգության ոլորտում տիրող անկայունությունը և ապահով թվային մուտքի կարևորությունը:

4. Բնապահպանական սպառնալիքներ

Տատանումներն ըստ տարածաշրջանների. առաջնագծում գտնվող ինչպես գյուղական, այնպես էլ քաղաքային բնակավայրերին, հատկապես «պոտենցիալ վերադարձողների» շրջանում տրվել են բնապահպանական սպառնալիքների ավելի բարձր գնահատականներ, ինչը ցույց է տալիս այս բնակավայրերի հետ կապված անորոշություններն ու ռիսկերը:

> *«Լսել եմ, որ ադրբեջանցիները մեր գյուղում արդեն բնական սնդիկ են արդյունահանում՝ ստեղծելով բնապահպանական սպառնալիքներ»:* (Կին, մասնավոր կամ պետական հատվածի աշխատող, սահմանամերձ գյուղական բնակավայր, 45-60 տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ):

Գենդերային տեսանկյունը. վերադառնալու պլաններ ունեցող թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք բնապահպանական սպառնալիքների առնչությամբ ավելի մեծ մտահոգություն են հայտնում, ընդ որում կանայք այս առնչությամբ ունեն մի փոքր ավելի շատ տագնապներ:

Մտահոգություններն ըստ տարիքային խմբերի. բնապահպանական սպառնալիքների առնչությամբ ամենամեծ մտահոգությունը հայտնում են երիտասարդ ռեսպոնդենտները (18-30 տարիքային խումբ), ինչը ցույց է տալիս կայունության և երկարաժամկետ ազդեցությունների հետ կապված մտավախությունները:

> *«Ես կարծում եմ, որ ամեն ինչ սկսվում է ռեսուրսների համար պայքարից»:* (Տղամարդ, մասնավոր կամ պետական հատվածի աշխատող, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, 18-30 տարիքային խումբ, հետագա պլաններում չկողմնորոշված):

Տատանումներն ըստ զբաղվածության. վերադառնալու պլաններ ունեցող՝ պետական հիմնարկների նախկին աշխատողներն ու ուսանողները բնապահպանական սպառնալիքների առնչությամբ չափազանց մեծ անհանգստություն են հայտնում, ինչն ընդգծում է բնապահպանական պայմանների անկայունությունը և կայուն գործելակերպերի ներդրման խիստ անհրաժեշտությունը:

5. Քաղաքական և սոցիալական սպառնալիքներ

Տատանումներն ըստ տարածաշրջանների. քաղաքական և սոցիալական սպառնալիքները տարբեր բնակավայրերում ընկալվում են տարբեր կերպ, ընդ որում՝ այն զգալի տարբեր է Հայաստանում մնալու պլաններ ունեցողների և Լեռնային Ղարաբաղ վերադառնալու մտադրություն ունեցողների միջև: Սահմանամերձ գյուղական բնակավայրերում «պոտենցիալ վերադարձողները» քաղաքական և սոցիալական սպառնալիքներին տվել են 9,1 գնահատական, ինչը զգալիորեն ավելի բարձր է, քան Հայաստանում մնալու պլաններ ունեցողների կողմից տրված 8,0 միջին գնահատականը: Սահմանամերձ քաղաքային բնակավայրերին տրված գնահատականների միջև նույնիսկ ավելի մեծ տարբերություն կա, ընդ որում՝ պոտենցիալ վերադարձողները քաղաքական և սոցիալական սպառնալիքները գնահատում են 9,2 միավոր, ինչը զգալիորեն ավելի բարձր է, քան Հայաստանում մնալու պլաններ ունեցողների կողմից տրված 6,6 գնահատականը:

> *«Ես կարծում եմ, որ Ադրբեջանը կոռումպացված երկիր է և, բնականաբար, կոռումպացված կդարձնեն նաև Արցախը»:* (Կին, մասնավոր կամ պետական հատվածի աշխատող, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, 18-30 տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ):

Գենդերային տեսանկյունը. Լեռնային Ղարաբաղ վերադառնալու պլաններ ունեցող տղամարդ ռեսպոնդենտները քաղաքական և սոցիալական սպառնալիքները գնահատում են 9,1 միավոր, ինչը զգալիորեն բարձր է Հայաստանում մնալու պլաններ ունեցող ռեսպոնդենտների կողմից տրված 7,0 գնահատականից: Սա վկայում է այն մասին, որ տղամարդիկ քաղաքական անկայունության և սոցիալական տարաձայնությունների ավելի մեծ ռիսկ են տեսնում տարածաշրջանում:

> *«Կոնֆլիկտներ միշտ էլ կլինեն: Ինչպես եղել է նախկինում, այնպես էլ կլինի հիմա»:* (Տղամարդ, գործազուրկ, սահմանամերձ քաղաքային բնակավայր, 45-60 տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ):

Մտահոգություններն ըստ տարիքային խմբերի. քաղաքական և սոցիալական կայունությունը հրատապ խնդիր է բոլոր տարիքային խմբերի համար, ընդ որում դրա ազդեցությունն ավելի շատ զգում են երիտասարդ ռեսպոնդենտները:

Տատանումներն ըստ զբաղվածության. տարբեր մասնագիտական խմբերում քաղաքական և սոցիալական սպառնալիքների առնչությամբ մտահոգության տարբեր աստիճաններ են դիտարկվում: Նախկին պետական հիմնարկների աշխատողների շրջանում Լեռնային Ղարաբաղ վերադառնալու պլաններ ունեցողները քաղաքական և սոցիալական սպառնալիքները գնահատում են առավելագույնը 10,0 միավոր՝ ի տարբերություն Հայաստանում մնալու մտադրություն ունեցողների, որոնք քաղաքական և սոցիալական սպառնալիքները գնահատում են 8,0 միավոր: Միավորների այս զգալի տարբերությունը ցույց է տալիս կառավարման գործընթացում ձախողումների, քաղաքական մանիպուլյացիաների և սոցիալական անկայունության հետ կապված այն մարդկանց մտավախությունը, որոնք նախկինում Լեռնային Ղարաբաղում կատարել են կառավարական գործառույթներ:



Բարեկեցության հետ կապված սպառնալիքների վերլուծությունն ըստ տարածաշրջանային, գենդերային, տարիքային և զբաղվածության խմբերի

Գծապատկեր 8. «Բարեկեցություն» կատեգորիայի սպառնալիքների միջին գնահատականները՝ խմբերից յուրաքանչյուրի համար



6. Բարեկեցության և ֆինանսական կայունության հետ կապված սպառնալիքներ

Տատանումներն ըստ տարածաշրջանների. ոչ սահմանամերձ բնակավայրերում, հատկապես Հայաստանում մնալ նախընտրողների շրջանում նկատվում է ֆինանսական կայունության առնչությամբ ավելի պակաս, սակայն դեռևս բավականին լուրջ մտահոգություն:

> *«Եթե մարդը կարող է ստեղծել արժեք, ապա դա կարող է անել ցանկացած վայրում: Աղքատներն աղքատ են իրենց սեփական գործողությունների պատճառով»:* (Կին, գործազուրկ, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, 45-60 տարիքային խումբ, նախընտրում է Հայաստանում մնալ):
>
> *«Բարեկեցությունն ինձ համար խոչընդոտ չէ: Ես պատրաստ եմ ապրել սովի մեջ, քանի դեռ կարող եմ վերադառնալ տուն՝ Ղարաբաղ»:* (Տղամարդ, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, գործազուրկ, 45-60 տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ):

Գենդերային տեսանկյունը. Գենդերային վերլուծությունը ցույց է տալիս, որ Լեռնային Ղարաբաղ վերադառնալու պլաններ ունեցող թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք, ի տարբերություն Հայաստանում մնացողների կամ չկողմնորոշվածների, ֆինանսական կայունության առնչությամբ ավելի մեծ մտահոգություններ են հայտնում: Հատկապես տղամարդիկ ունեն մի փոքր ավելի մեծ տագնապներ, ինչը ցույց է տալիս ֆինանսական ապահովության առնչությամբ նրանց մեծ անհանգստությունները՝ նոր կամ այն միջավայրում, ուր վերադառնալու են: Թեև կանայք նույնպես լուրջ մտահոգություններ են հայտնում, այնուամենայնիվ, նրանց տագնապի մակարդակը մի փոքր ավելի ցածր է, քան տղամարդկանցը: Այնուամենայնիվ, պոտենցիալ վերադարձողների շրջանում մեծ մտահոգության ընդհանուր միտումը երկու գենդերային խմբերում էլ նույնն է:

> *«Միշտ այդպես է եղել՝ հարուստներն էլ ավելի են հարստանում, իսկ աղքատներն էլ ավելի աղքատանում»:* (Կին, սահմանամերձ գյուղական բնակավայր, գործազուրկ, 45-60 տարիքային խումբ, նախընտրում է Հայաստանում մնալ):

Մտահոգություններն ըստ տարիքային խմբերի. թե՛ տղամարդկանց և թե՛ կանանց 30-45 տարիքային խումբը մշտական մտահոգություն են հայտնում, մինչդեռ վերադառնալու պլաններ ունեցող միջին տարիքի ռեսպոնդենտներն (45-60 տարիքային խումբ) ավելի շատ են անհանգստացած, քան Հայաստանում մնացողները:

> *«Յուրաքանչյուր երկրում կա և կշարունակի լինել կենսամակարդակի անհավասարություն»:* (Կին, սահմանամերձ գյուղական բնակավայր, մասնավոր կամ պետական հատվածի աշխատող, 45-60 տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ):

Տատանումներն ըստ զբաղվածության. տարբեր զբաղվածություններ ունեցող մարդկանց խմբերում բարեկեցության հետ կապված սպառնալիքների ընկալումների միջև էական տարբերություններ չեն արձանագրվել:

7. Բավարար կենսամակարդակի հետ կապված սպառնալիքները

Տատանումներն ըստ տարածաշրջանների. ռեսպոնդենտները գյուղական բնակավայրերում բավարար կենսամակարդակի պահպանման առնչությամբ ավելի մեծ մտահոգություններ են հայտնում, քան Հայաստանի քաղաքային բնակավայրերի կենսամակարդակի առնչությամբ:

> *«Ես հիմա էլ ունեմ նույն դժվարությունները: Այս պահին ինձ դժվար է հասանելիություն ունենալ գազին, ջրին և այլն:* (Կին, սահմանամերձ գյուղական բնակավայր, գործազուրկ, 45-60 տարիքային խումբ, նախընտրում է Հայաստանում մնալ):

Գենդերային տեսանկյունը. Կանայք ունեն ավելի մեծ տագնապներ, քան տղամարդիկ, ինչը ցույց է տալիս կենսապայմանների և հիմնական ծառայությունների հասանելիության առնչությամբ մեծ անհանգստությունները:

> *«Ես ամեն ինչի պատրաստ եմ միայն, թե լինեմ իմ հայրենիքում՝ Ղարաբաղում»:* (Տղամարդ, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, գործազուրկ, 45-60 տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ):

Մտահոգություններն ըստ տարիքային խմբերի. բավարար կենսամակարդակի առնչությամբ, հատկապես վերադառնալու պլաններ ունեցող անձանց շրջանում ամենամեծ մտահոգությունը հայտնում են երիտասարդները (18-30 տարիքային խումբ), ինչը ցույց է տալիս անկայուն միջավայրում անկախ կյանք սկսելու հետ կապված նրանց ունեցած խոր տագնապները:

> *«Գիտեք, որ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներն ունեն բնակարանով ապահովվածության խնդիր: Ընդհանուր առմամբ մարդկանց սոցիալական վիճակը շատ ծանր է:* (Կին, սահմանամերձ գյուղական բնակավայր, ուսանող, 18-30 տարիքային խումբ, հետագա պլաններում չկողմնորոշված)
>
> *«Լեռնային Ղարաբաղի շրջափակումից մենք դեռ հիշում ենք, թե ինչպես Ղարաբաղի բնակչությունը մնաց առանց գազ, էլեկտրաէներգիա, ջուր»:* (Կին, սահմանամերձ գյուղական բնակավայր, գործազուրկ, 18-30 տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ):

> *«Եթե մնացած բոլոր հարցերը լուծվեն, ապա այս ծառայությունները նույնպես հասանելի կլինեն բոլորի համար»:* (Կին, սահմանամերձ գյուղական բնակավայր, մասնավոր կամ պետական հատվածի աշխատող, 45-60 տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ):

Տատանումներն ըստ զբաղվածության. տարբեր զբաղվածություններ ունեցող մարդկանց խմբերում բավարար կենսամակարդակի ընկալումների միջև էական տարբերություններ չեն արձանագրվել:

8. Կայուն զբաղվածության հետ կապված սպառնալիքներ

Տատանումներն ըստ տարածաշրջանների. առաջնագծում գտնվող գյուղական բնակավայրերում՝ Հայաստանում մնալու պլաններ ունեցողները կայուն զբաղվածության առնչությամբ չափավոր անհանգստություն են հայտնում, ընդ որում դրա միջին գնահատականը 8,0 միավոր է:

Լեռնային Ղարաբաղ վերադառնալու պլաններ ունեցողների շրջանում մտահոգությունը մի փոքր ցածր է՝ 7,9 միավոր: Սա կարող է նշանակել, որ պոտենցիալ վերադարձողների համար կայուն զբաղվածության հարցը գերառաջնահերթություն չէ, և որ նրանք կարծում են, որ աշխատանքի հետ կապված հարցերը կլուծվեն, երբ լուծվեն առավել կարևոր հարցերը:

> *«Եթե մարդն իր առջև նպատակ է դնում, ապա նա միշտ կարող է աշխատանք գտնել»:* (Տղամարդ, սահմանամերձ քաղաքային բնակավայր, մասնավոր կամ պետական հատվածի աշխատող, 30-45 տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ):

Գենդերային տեսանկյունը. կանայք հատկապես մտահոգված են տղամարդկանց աշխատուժի բացակայության պայմաններում զբաղվածության խնդիրների հետևանքներից, ինչն ազդում է ընտանեկան փոխհարաբերությունների ու կայունության վրա:

> *«Եթե գործազրկությունը շարունակվի, ապա դա կհանգեցնի անկարգության և անկայունության»:* (Կին, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, մասնավոր կամ պետական հատվածի աշխատող, 18-30 տարիքային խումբ, նախընտրում է Հայաստանում մնալ):
>
> *«Արդեն երկար ժամանակ է, ինչ մեր ընտանիքում ոչ մեկը չի կարողանում աշխատանք գտնել: Սա իսկապես շատ սթրեսային է մեզ համար: Ես հասկանում եմ, թե դա ինչ է, և սա համարում եմ լուրջ սպառնալիք»:* (Կին, սահմանամերձ գյուղական բնակավայր, գործազուրկ, 45-60 տարիքային խումբ, նախընտրում է Հայաստանում մնալ):

Մտահոգություններն ըստ տարիքային խմբերի. Հայաստանում մնացող կենսաթոշակառուները մեծ մտահոգություն են հայտնում՝ տալով միջին 8,2 գնահատական, ինչը ցույց է տալիս, որ նրանք աշխատանքի կայունությունը պահպանելու առնչությամբ անհանգստություն ունեն նույնիսկ կենսաթոշակային տարիքում: Վերադառնալու պլաններ ունեցող կենսաթոշակառուներն այս խնդիրն ավելի ցածր են գնահատել՝ տալով 8,0 միավոր, ինչը ցույց է տալիս մեծ տարիքում զբաղվածության հեռանկարների վերաբերյալ շարունակական մտահոգությունների մասին:

> *«Ուր գնում եմ, ասում են ծեր եմ: Աշխատանքի են ընդունում միայն երիտասարդներին: Ի՞նչ է, ես տատիկ եմ»:* (Կին, սահմանամերձ գյուղական

> բնակավայր, գործազուրկ, 45-60 տարիքային խումբ, նախընտրում է Հայաստանում մնալ):

Տատանումներն ըստ զբաղվածության. տարբեր զբաղվածություններ ունեցող մարդկանց խմբերում կայուն զբաղվածության առնչությամբ տեսակետների միջև զգալի տարբերություններ չեն արձանագրվել:

9. Սոցիալական ապահովության հետ կապված սպառնալիքներ

Տատանումներն ըստ տարածաշրջանների. առաջնագծում գտնվող գյուղական բնակավայրերում՝ Հայաստանում մնալու պլաններ ունեցողները սոցիալական ապահովության առնչությամբ չափավոր մտահոգություն են հայտնում: Այնուամենայնիվ, Լեռնային Ղարաբաղ վերադառնալու պլաններ ունեցողների շրջանում մտահոգությունը սաստկանում է, ինչը վկայում է բարձր ռիսկայնություն ունեցող տարածաշրջանում սոցիալական ապահովության համակարգերի հուսալիության ու համապատասխանության առնչությամբ լուրջ տագնապների մասին:

Գենդերային տեսանկյունը. դրանց և կոնկրետ գենդերի միջև կապեր չեն արձանագրվել:

Մտահոգություններն ըստ տարիքային խմբերի. դրանց և կոնկրետ տարիքային խմբերի միջև կապեր չեն արձանագրվել: Այս կապերի բացակայությունը կարող է վկայել այս ժողովրդագրական խմբերում իսկապես միատեսակ մտահոգության առկայության մասին:

Տատանումներն ըստ զբաղվածության. Հայաստանում մնացող՝ Լեռնային Ղարաբաղի պետական հիմնարկների և տեղական ինքնակառավարման մարմինների նախկին աշխատողները չափավոր մտահոգություն են հայտնում՝ միջին գնահատականը 5,8 միավոր: Վերադառնալու մտադրություն ունեցողներն այս խնդիրն ավելի ցածր են գնահատել՝ տալով 0 միավոր, ինչը հավանաբար վկայում է իրենց դերակատարության և վերադարձից հետո Ադրբեջանի կառավարության կողմից տրամադրվող անվտանգության առնչությամբ չափազանց մեծ մտահոգությունների մասին:

> *«Ակնհայտ է, որ աջակցություն չի լինելու»:* (Տղամարդ, սահմանամերձ գյուղական բնակավայր, տեղական ինքնակառավարման մարմինների նախկին աշխատող, 45-60 տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ):
>
> *«Ադրբեջանցիներն ամեն ինչ կանեն մեր կյանքը բարդացնելու համար»:* (Կին, սահմանամերձ գյուղական բնակավայր, տեղական ինքնակառավարման մարմինների նախկին աշխատող, 18-30 տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ):

10. Կրթության իրավունքի իրացման և հմտությունների զարգացման հետ կապված սպառնալիքներ

Տատանումներն ըստ տարածաշրջանների. դրանց և բնակավայրերի միջև կապեր չեն արձանագրվել: Այս կապերի բացակայությունը վկայում է, որ տարբեր բնակավայրերում կրթության և դրան առնչվող սպառնալիքների առնչությամբ նկատվել է միատեսակ մտահոգություն: Դրանով կարող են բացատրվել տեղահանման, որակյալ կրթության հասանելիության և ինտեգրման հետ կապված համատարած մարտահրավերները՝ անկախ կոնկրետ աշխարհագրական տեղանքից:

Գենդերային տեսանկյունը. կանայք ունեն ավելի մեծ տագնապներ, քան տղամարդիկ, ինչը վկայում է որակյալ կրթության հնարավորությունների

հասանելիության հետ կապված զգալի անհանգստությունների մասին: Սա կարելի է վերագրել նրանց՝ որպես հիմնական խնամող ավանդական դերերին և այն բարձր գնին, որը նրանք վճարում են իրենց երեխաների կրթությունն ապահովելու դիմաց: Բացի դրանից, կանայք կարող են իրենց ավելի խոցելի զգալ համակարգային խտրականության և կրթություն ստանալու խոչընդոտների նկատմամբ:

> *«Իմ երեխաներն արդեն չորս դպրոց են փոխել Ղարաբաղից վտարվելուց հետո: Ի՞նչ նորմալ կրթության մասին է խոսքը: Սա իսկապես մեծ սպառնալիք ու մտահոգություն է:* (Կին, սահմանամերձ գյուղական բնակավայր, գործազուրկ, 45-60 տարիքային խումբ, նախընտրում է Հայաստանում մնալ):
>
> *«Եկե՛ք պատկերացնենք, որ իմ երեխան ընդունվում է համալսարան, որտեղ կրթությունն ադրբեջաներենով է: Ինչպե՞ս կարող է նման բան լինել: Ինչպե՞ս են երեխայիս վերաբերվելու: Պարզ է, որ խտրականություն է լինելու»:* (Կին, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, գործազուրկ, 45-60 տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ):

Մտահոգություններն ըստ տարիքային խմբերի. կրթության և հմտությունների զարգացման առնչությամբ, հատկապես վերադառնալու պլաններ ունեցողների շրջանում ամենամեծ մտահոգությունը հայտնում են երիտասարդները (18-30 տարիքային խումբ), ինչը ցույց է տալիս բավարար կրթական աջակցության պայմաններում անկախ կյանք սկսելու հետ կապված նրանց խոր տագնապները:

> *«Ադրբեջանը կրթության միջոցով ատելության խոսք է քարոզում»:* (Կին, սահմանամերձ գյուղական բնակավայր, պետական հիմնարկի նախկին աշխատող, 18-30 տարիքային խումբ, հետագա պլաններում չկողմնորոշված):

Տատանումներն ըստ զբաղվածության. տարբեր զբաղվածություններ ունեցող մարդկանց խմբերում կրթության հետ կապված սպառնալիքների ընկալումների միջև զգալի մասնագիտական տարբերություններ չեն արձանագրվել: Տատանումների այս բացակայությունը կարող է հուշել, որ կրթության առնչությամբ մտահոգությունները համընդհանուր են տարբեր զբաղվածություններ ունեցող մարդկանց խմբերի համար, ինչը վկայում է կրթության կարևորության և դրա հասանելիության ճանապարհին ընդհանուր մարտահրավերների լայնորեն ընդունման մասին՝ անկախ մասնագիտական փորձից:

11. Առողջության պահպանման անհավասարաթյան սպառնալիքներ

Տատանումներն ըստ տարածաշրջանների. դրանց և բնակավայրերի միջև կապեր չեն արձանագրվել:

Գենդերային տեսանկյունը. դրանց և կոնկրետ գենդերի միջև կապեր չեն արձանագրվել:

Մտահոգություններն ըստ տարիքային խմբերի. առողջության պահպանման անհավասարության սպառնալիքների ընկալումների միջև զգալի տարբերություններ՝ ըստ տարիքային խմբերի, չեն արձանագրվել. սա վկայում է այն մասին, որ տարբեր տարիքային խմբեր այս սպառնալիքների առնչությամբ մտահոգություն են հայտնում:

Տատանումներն ըստ զբաղվածության. նույն կերպ՝ առողջության պահպանման անհավասարության սպառնալիքների ընկալումների միջև զգալի տարբերություններ՝ ըստ մասնագիտական խմբերի, չեն արձանագրվել. սա վկայում է այն մասին, որ տարբեր մասնագիտական խմբեր այս սպառնալիքների առնչությամբ նույն տեսակետն են հայտնում:

Ազատության հետ կապված սպառնալիքների վերլուծությունը՝ ըստ տարածաշրջանային, գենդերային, տարիքային և զբաղվածության խմբերի

Գծապատկեր 8. «Ազատություն» կատեգորիայի սպառնալիքների միջին գնահատականները՝ խմբերից յուրաքանչյուրի համար



12.Ժողովրդավարության և ազատության հետ կապված սպառնալիքներ

Տատանումներն ըստ տարածաշրջանների. դրանց և կոնկրետ բնակավայրերի միջև կապեր չեն արձանագրվել:

Գենդերային տեսանկյունը. Լեռնային Ղարաբաղ վերադառնալու պլաններ ունեցող թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք ժողովրդավարական սպառնալիքների առնչությամբ ավելի մեծ մտահոգություն են հայտնում, ընդ որում՝ կանանց շրջանում արձանագրվել են քաղաքական իրավունքների առնչությամբ նկատելի մեծ տագնապներ:

> *«Համոզված եմ, որ մենք մեր կարծիքն արտահայտելու հնարավորություն չենք ունենալու և մենք ոչինչ չենք կարողանալու ասել»:* (Կին, սահմանամերձ գյուղական բնակավայր, մասնավոր կամ պետական հատվածի աշխատող, 45-60 տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ):
>
> *«Մենք այս խնդիրներին բախվում ենք անգամ Հայաստանում: Բնականաբար, եթե վերադառնանք տուն՝ Ղարաբաղ և ապրենք Ադրբեջանի իշխանության ներքո, դա անպայման տեղի է ունենալու»:* (Կին, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, գործազուրկ, 30-45 տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ):

Մտահոգություններն ըստ տարիքային խմբերի. ժողովրդավարության և ազատության հետ կապված սպառնալիքների առնչությամբ ամենամեծ մտահոգությունը հայտնում են երիտասարդները, հատկապես Լեռնային Ղարաբաղ վերադառնալու մտադրություն ունեցողները, ինչը վկայում է անկայուն ժողովրդավարական միջավայրում նրանց ապագայի վերաբերյալ խոր մտավախությունների մասին:

> *«Մեզ մոտ, օրինակ, ասում են ինչ ցանկանում են, երբեմն, իհարկե, անհեթեթություն»:* (Կին, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, մասնավոր կամ պետական հատվածի աշխատող, 18-30 տարիքային խումբ, հետագա պլաններում չկողմնորոշված):

> *«Խոսքի ազատության մասին ընդհանրապես խոսելն ավելորդ է: Պարզ է, որ դա լուրջ սպառնալիք է, երբ վերադառնանք տուն»:* (Կին, սահմանամերձ գյուղական բնակավայր, գործազուրկ, 18-30 տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ):

Տատանումներն ըստ զբաղվածության. ժողովրդավարական կայունության առնչությամբ լուրջ տագնապ նկատվում է հատկապես պետական հիմնարկների և տեղական ինքնակառավարման մարմինների նախկին աշխատողների շրջանում: Նրանք հայտնում են Լեռնային Ղարաբաղ վերադարձի դեպքում ժողովրդավարական իրավունքների ճնշման առնչությամբ խիստ մտավախությունների մասին:

> *«Երբեք հնարավոր չի լինի ազատ խոսել»:* (Տղամարդ, սահմանամերձ գյուղական բնակավայր, կառավարության նախկին աշխատող, 45-60 տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ):

13. Արդյունավետ ժողովրդավարական կառավարման հետ կապված սպառնալիքներ

Տատանումներն ըստ տարածաշրջանների. արդյունավետ ժողովրդավարական կառավարման առնչությամբ մտահոգությունները հատկապես ընդգծված են առաջնագծում գտնվող ինչպես գյուղական, այնպես էլ քաղաքային բնակավայրերում: Ավելին, թե՛ սահմանամերձ, թե՛ ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայրերում, ի տարբերություն գյուղական բնակավայրերի, արձանագրվում է ավելի մեծ մտահոգություն: Սա վկայում է քաղաքային միջավայրում կառավարման գործընթացում մարտահրավերների առավել լայն ընկալման մասին, ինչը կառավարման գործընթացներից ավելի մեծ ակնկալիքների և վարչական գործընթացների ու դրանց թերությունների հետ առնչվելու հետևանք է:

> *«Այնտեղ, որտեղ կան հայեր, կոռուպցիայի պակաս չի զգացվում»:* (Կին, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, 45-60 տարիքային խումբ, նախընտրում է Հայաստանում մնալ):

Գենդերային տեսանկյունը. համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ ժողովրդավարական կառավարման արդյունավետության առնչությամբ մտահոգությունները տարածված են ինչպես տղամարդ, այնպես էլ կին ռեսպոնդենտների շրջանում, ընդ որում Լեռնային Ղարաբաղ վերադառնալու պլաններ ունեցողների շրջանում արձանագրվում է նկատելի տագնապ: Թե՛ Հայաստանում մնացող, թե՛ վերադառնալու պլաններ ունեցող տղամարդկանց շրջանում ընդհանուր առմամբ մի փոքր ավելի շատ մտահոգություն է նկատվում, քան կանանց շրջանում:

Մտահոգություններն ըստ տարիքային խմբերի. ամենամեծ մտահոգությունը հայտնում են երիտասարդները, ինչը վկայում է իրենց ապագայի և ժողովրդավարական կառույցների կայունության առնչությամբ խոր մտավախությունների մասին:

> *«Թվում է, թե դրանք թափանցիկ ժողովրդավարական կառույցներ են, սակայն իրականության հետ առերեսվելիս զգում ես, որ ամեն ինչ այնքան էլ լավ չէ, ինչպես ներկայացվում է նրանց ֆեյսբուքյան էջերում»:* (Կին, սահմանամերձ գյուղական բնակավայրի ուսանող, 18-30 տարիքային խումբ, հետագա պլաններում չկողմնորոշված):

Տատանումներն ըստ զբաղվածության. տարբեր զբաղվածություններ ունեցող մարդկանց խմբերում ժողովրդավարական կառավարման առնչությամբ տեսակետների միջև զգալի տարբերություններ չեն արձանագրվել, ինչը վկայում է կառավարման գործընթացներում առկա մարտահրավերները լայնորեն ընդունելու մասին:

14.Խոսքի ազատության հետ կապված սպառնալիքներ

Տատանումներն ըստ տարածաշրջանների. ամենաշատ անհանգստությունները նկատվում են առաջնագծում գտնվող ինչպես գյուղական, այնպես էլ քաղաքային բնակավայրերում, որտեղ ռեսպոնդենտները վախենում են ազատ արտահայտվելու իրենց հնարավորությունների խիստ սահմանափակումներից: Սա ցույց է տալիս գրաքննության և խոսքի սահմանափակումների առնչությամբ տարածված մտավախությունները:

> *«Իրականում խոսքի ազատության ճնշման դեպքեր կան: Օրինակ՝ ինչ-որ մեկը «վատ» գրառում է կատարել երկրի վարչապետի մասին, հետո այն ջնջելու «հրահանգ է ստացել»: Նրանց ահաբեկել են կեղծ էջերի միջոցով և այլ եղանակներով»:* (Կին, սահմանամերձ գյուղական բնակավայր, ուսանող, 18-30 տարիքային խումբ, հետագա պլաններում չկողմնորոշված):

Գենդերային տեսանկյունը. թե՛ Հայաստանում մնացող, թե՛ Լեռնային Ղարաբաղ վերադառնալու պլաններ ունեցող տղամարդկանց շրջանում ընդհանուր առմամբ ավելի շատ մտահոգություն է նկատվում, քան կանանց շրջանում:

Մտահոգություններն ըստ տարիքային խմբերի. ամենամեծ մտահոգությունը նկատվում է միջին տարիքի ռեսպոնդենտների շրջանում (45-60 տարիքային խումբ):

> *«Նույնիսկ այստեղ Հայաստանում, ես չեմ կարող ասել այն, ինչ մտածում եմ: Պարզ է, որ եթե վերադառնայի Ղարաբաղ, իրավիճակն ավելի վատ կլիներ»:* (Տղամարդ, սահմանամերձ քաղաքային բնակավայր, մասնավոր կամ պետական հատվածի աշխատող, 45-60 տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ):

Տատանումներն ըստ զբաղվածության. չափազանց խոր տագնապ նկատվում է նախկին պետական հիմնարկների աշխատողների շրջանում, ինչը ցույց է տալիս գրաքննության առնչությամբ առկա խիստ մտավախությունները: Այնուամենայնիվ, ուսանողների շրջանում նույնպես նկատվում է չափավոր տագնապ, ինչը վկայում է խոսքի ազատությունների նկատմամբ տարածված, սակայն տարբեր մակարդակների մտահոգությունների մասին:

15.Մարդու իրավունքների խախտման սպառնալիքներ

Տատանումներն ըստ տարածաշրջանների. մարդու իրավունքների հետ կապված սպառնալիքների առնչությամբ մտահոգություններն ուժեղանում են առաջնագծում գտնվող բնակավայրերում.

> *«Ինչ վերաբերում է մարդու իրավունքներին՝ դա կախված է նրանից, թե Ղարաբաղում ինչ կառավարություն կլինի: Եթե այն ադրբեջանական լինի, ապա վստահաբար կարելի է ասել, որ կլինեն հետապնդումներ և խոշտանգումներ, իսկ Հայաստանի ղեկավարության դեպքում դա բացառվում է:* (Կին, սահմանամերձ գյուղական բնակավայր, տեղական ինքնակառավարման մարմինների աշխատող, 45-60 տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ):

Գենդերային տեսանկյունը. Լեռնային Ղարաբաղ վերադառնալու պլաններ ունեցող թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք ավելի մեծ մտահոգություն են հայտնում մարդու իրավունքների խախտման սպառնալիքների առնչությամբ: Այնուամենայնիվ, տղամարդիկ ընդհանուր առմամբ ավելի մեծ մտահոգություն են հայտնում, քան կանայք:

Մտահոգություններն ըստ տարիքային խմբերի. դրանց և կոնկրետ տարիքային խմբի միջև կապեր չեն արձանագրվել:

Տատանումներն ըստ զբաղվածության. չափազանց խոր մտահոգություն է նկատվում նախկին պետական հիմնարկների աշխատողների շրջանում, ինչը ցույց է տալիս իրավունքների չարաշահումների առնչությամբ առկա խիստ մտավախությունները:

16.Քաղաքացիական ազատությունների հետ կապված սպառնալիքներ

Տատանումներն ըստ տարածաշրջանների. քաղաքացիական ազատությունների առնչությամբ մտահոգություններն առավել ընդգծված են եղել առաջնագծում գտնվող բնակավայրերի ռեսպոնդենտների, հատկապես Լեռնային Ղարաբաղ վերադառնալու ցանկություն ունեցողների շրջանում:

> *«Ամեն ինչ շատ անկանխատեսելի է. ամեն ինչ կախված է նրանից, թե ինչ ղեկավարություն կլինի Ղարաբաղում՝ հայկական, թե ադրբեջանական»:* (Կին, սահմանամերձ գյուղական բնակավայր, 45-60 տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ)

Գենդերային տեսանկյունը. դրանց և կոնկրետ գենդերի միջև կապեր չեն արձանագրվել:

Մտահոգություններն ըստ տարիքային խմբերի. դրանց և կոնկրետ տարիքային խմբի միջև կապեր չեն արձանագրվել:

Տատանումներն ըստ զբաղվածության. դրանց և զբաղվածության տեսակների միջև կապեր չեն արձանագրվել:

17.Սոցիալական և մշակութային ճնշումների սպառնալիքներ

Տատանումներն ըստ տարածաշրջանների. բոլոր բնակավայրերում Լեռնային Ղարաբաղ վերադառնալու պլաններ ունեցողները մշտապես հայտնում են սոցիալ-մշակութային ճնշումների առնչությամբ ավելի մեծ մտահոգություններ, քան Հայաստանում մնացողները: Այլ քաղաքական վերահսկողության ներքո գտնվող տարածք վերադառնալու առնչությամբ մեծ մտահոգություններ նկատվում են առաջնագծում գտնվող ինչպես գյուղական, այնպես էլ քաղաքային բնակավայրերում:

> *«Կան մարդիկ, որոնք ցանկանում են վերադառնալ Ղարաբաղ, նույնիսկ եթե այն լինի Ադրբեջանի կազմում, ինչպես դա խորհրդային տարիներին էր, սակայն այս առնչությամբ ես մտավախություններ ունեմ, քանի որ նույնիսկ այն ժամանակ կար խտրականություն»:* (Կին, սահմանամերձ գյուղական բնակավայր, տեղական ինքնակառավարման մարմինների աշխատող, 45-60 տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ):

Գենդերային տեսանկյունը.կանայք սոցիալ-մշակութային ճնշումների սպառնալիքները համարում են Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց՝ Հայաստանին ինտեգրվելու էական խոչընդոտներ: Դա կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ նրանք կարող են բախվել ինչպես ընդհանուր, այնպես էլ գենդերով պայմանավորված խտրականության:

> *«Խտրականության երևույթը բնորոշ է մեր ազգին: Նույնը Ղարաբաղում, խտրականություն էր դրվում մեր և մյուս գյուղացու միջև: Ես հանգիստ եմ վերաբերում այս երևույթին»:* (Կին, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, 45-60 տարիքային խումբ, նախընտրում է Հայաստանում մնալ):

Մտահոգություններն ըստ տարիքային խմբերի. ամենաշատ տագնապ նկատվում է միջին տարիքի ռեսպոնդենտների (45-60 տարիքային խումբ) և

երիտասարդների շրջանում (18-30 տարիքային խումբ), ինչը վկայում է Ղարաբաղ վերադարձի դեպքում խտրականության ու մարգինալացման խոր մտավախությունների մասին:

> *«Եթե այնտեղ ադրբեջանցիներ լինեն, ապա այս բոլոր սպառնալիքները կշարունակվեն և կլինեն շատ ռիսկային»:* (Կին, սահմանամերձ գյուղական բնակավայր, մասնավոր կամ պետական հատվածի աշխատող, 30-45 տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ):

Տատանումներն ըստ զբաղվածության. չափազանց խոր մտահոգություններ նկատվում են նախկին պետական հիմնարկների աշխատողների շրջանում, ինչը ցույց է տալիս նրանց նախկին դերերի և պատկանելության հիմքով խտրականության ու մարգիանալացման առնչությամբ խիստ մտավախությունները:



Ինքնության հետ կապված սպառնալիքների վերլուծությունն ըստ տարածաշրջանային, գենդերային, տարիքային և զբաղվածության խմբերի

Գծապատկեր 10. «Ինքնություն» կատեգորիայի սպառնալիքների միջին գնահատականները՝ խմբերից յուրաքանչյուրի համար



18.Հավասարության, ներառականության և անկողմնակալության հետ կապված սպառնալիքներ

Տատանումներն ըստ տարածաշրջանների. բոլոր բնակավայրերում Լեռնային Ղարաբաղ վերադառնալու պլաններ ունեցողները մշտապես հայտնում են հավասարության, ներառականության և անկողմնակալության առնչությամբ ավելի մեծ մտահոգություններ, քան Հայաստանում մնացողները: Ամենաշատ տագնապ նկատվում է առաջնագծում գտնվող քաղաքային բնակավայրերում: Մտահոգությունների մակարդակը շարունակում է բարձր մնալ, ինչը ցույց է տալիս, որ թե՛ Հայաստանին ինտեգրվելու, թե՛ Ադրբեջանի վերահսկողության ներքո Լեռնային Ղարաբաղ վերադարձի դեպքում հավասարության և ներառականության խնդիրների առնչությամբ կան համատարած մտավախություններ:

> *«Այստեղ ոչ մի գաղտնիք չկա. բոլորը գիտեն, որ ղարաբաղցիների ու հայերի միջև տարբերակում է դրվում: Իհարկե, խոսքը բոլորի մասին չէ, սակայն այս երևույթի առկայությունն ակնհայտ փաստ է»:* (Կին, սահմանամերձ քաղաքային բնակավայր, գործազուրկ, 45-60 տարիքային խումբ, նախընտրում է Հայաստանում մնալ):
>
> *«Ցավով եմ նշում, սակայն նույնիսկ հայերն են միմյանց միջև տարբերակում դնում: Որքան էլ աչք փակենք ղարաբաղա-հայկական հարցի վրա, այնուամենայնիվ, խնդիրն առկա է: Չեմ ուզում մանրամասնել, սակայն նման դեպքերի շատ եմ ականատես եղել: Բոլորն են տեսնում համացանցում առցանց բուլինգի դեպքերը...»* (Կին, սահմանամերձ քաղաքային բնակավայր, ուսանող, 18-30 տարիքային խումբ, հետագա պլաններում չկողմնորոշված):

Գենդերային տեսանկյունը. թե՛ Հայաստանում մնացող, թե՛ վերադառնալու պլաններ ունեցող տղամարդկանց շրջանում ընդհանուր առմամբ ավելի շատ մտահոգություն է նկատվում, քան կանանց շրջանում: Այնուամենայնիվ, կանանց մտահոգությունները նույնպես զգալիորեն մեծանում են վերադարձի տարբերակը դիտարկելիս, ինչը վկայում է բոլոր գենդերային խմբերում խտրականության և անհավասար վերաբերմունքի տարածված մտավախությունների մասին:

> *«Նրանք անպայման տարբերակում կդնեն քրիստոնյաների և մուսուլմանների միջև, ինչը կունենա անկանխատեսելի հետևանքներ...»:* (Տղամարդ, սահմանամերձ գյուղական բնակավայր, գործազուրկ, 45-60 տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ):

Մտահոգություններն ըստ տարիքային խմբերի. ամենաշատ տագնապը նկատվում է միջին տարիքի ռեսպոնդենտների (45-60 տարիքային խումբ) և աշխատանքային բուռն գործունեություն իրականացնող երիտասարդների շրջանում (30-45 տարիքային խումբ), ինչը վկայում է թե՛ Հայաստանին ինտեգրվելու, թե՛ Ադրբեջանի վերահսկողության ներքո Լեռնային Ղարաբաղ վերադարձի դեպքում խտրականության և անհավասար վերաբերմունքի առնչությամբ լուրջ մտավախությունների մասին:

> *«Միանշանակ խտրականություն կլինի, եթե հայերն ու ադրբեջանցիները միասին ապրեն»:* (Կին, սահմանամերձ գյուղական բնակավայր, մասնավոր կամ պետական հատվածի աշխատող, 30-45 տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ):

Տատանումներն ըստ զբաղվածության. տարբեր զբաղվածություններ ունեցող մարդկանց բոլոր խմբերում Լեռնային Ղարաբաղ վերադառնալու պլաններ ունեցողները հավասարության, ներառականության և անկողմնակալության առնչությամբ ավելի մեծ մտահոգություններ են հայտնում, քան Հայաստանում մնացողները: Չափազանց խոր մտահոգություններ նկատվում են տեղական ինքնակառավարման մարմինների աշխատողների շրջանում, ինչը ցույց է տալիս, որ խտրականության և անհավասար վերաբերմունքի առնչությամբ կան լուրջ մտավախություններ:

> *«Ինձ թվում է, որ այսքանից հետո Ղարաբաղում հայերի և ադրբեջանցիների համակեցությունն անհնար է»:* (Կին, սահմանամերձ գյուղական բնակավայր, տեղական ինքնակառավարման մարմինների նախկին աշխատող, 45-60 տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ):

19. Մշակութային բազմազանության և ժառանգության պահպանման հետ կապված սպառնալիքներ

Տատանումներն ըստ տարածաշրջանների. տեղահանված անձանց շրջանում, հատկապես առաջնագծում գտնվող բնակավայրերում, ակնհայտ երևում է մեծ անհանգստության օրինաչափություն՝ հաշվի առնելով 2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո թիրախավորվող մշակութային ժառանգության հետ կապված իրավիճակը: Սա համապատասխանում է ռեսպոնդենտների հայտնած մտավախություններին և ցույց է տալիս, որ առկա է մշակութային ձուլման և կորստի իրատեսական վտանգ:

> *«Այսօր էլ տեսնում ենք, թե ինչ է տեղի ունենում մեր մշակութային ժառանգության, եկեղեցիների, գերեզմանատների հետ, դրանք բոլորը ոչնչացվում են ադրբեջանցիների կողմից...* (Կին, սահմանամերձ գյուղական բնակավայր, տեղական ինքնակառավարման մարմինների նախկին աշխատող, 45-60 տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ):

Գենդերային տեսանկյունը. թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք զգալի մտահոգություն են հայտնում մշակութային սպառնալիքների առնչությամբ, ըստ որում տղամարդկանց մոտ նկատվում է մի փոքր ավելի մեծ տագնապ: Սա ցույց է տալիս մշակույթի պահպանության գործում ավանդական դերերը:

Մտահոգություններն ըստ տարիքային խմբերի. բոլոր տարիքային խմբերը զգալի մտահոգություններ են հայտնում մշակութային սպառնալիքների առնչությամբ:



Առավել արտահայտված մտավախություններ նկատվում են երիտասարդների և միջին տարիքի ռեսպոնդենտների շրջանում, ինչը վկայում է մշակութային ինքնությունը կորցնելու սերնդային տագնապի մասին:

Տատանումներն ըստ զբաղվածության. պետական հիմնարկների նախկին աշխատողները լուրջ մտահոգություններ են հայտնում մշակութային սպառնալիքների առնչությամբ, ինչը համապատասխանում է կառավարման հնարավոր անկայուն միջավայրերում համակարգային մշակութային վերացման մտավախությունների հետ:

20. Ինքնության ճնշման սպառնալիքներ

Տատանումներն ըստ տարածաշրջանների. սահմանամերձ գյուղական և քաղաքային բնակավայրերի՝ Հայաստանում մնալու պլաններ ունեցող ռեսպոնդենտները չափավոր մտահոգություններ են հայտնում ինքնության ճնշման առնչությամբ, մինչդեռ Լեռնային Ղարաբաղ վերադառնալու պլաններ ունեցողների մոտ նկատվում է զգալիորեն ավելի մեծ տագնապ: Սա ցույց է տալիս, որ նրանք ունեն Ադրբեջանի վերահսկողության ներքո Լեռնային Ղարաբաղ վերադարձից հետո իրենց մշակութային ինքնությունը կորցնելու խոր մտավախություններ: Առաջնագծում չգտնվող գյուղական բնակավայրերում՝ Հայաստանում մնալու մտադրություն ունեցողները, չկողմնորոշվածները և Լեռնային Ղարաբաղ վերադառնալու ցանկություն ունեցողներն ունեն նույն մտահոգությունները, ինչը վկայում է ինքնության ճնշման համատարած մտավախությունների մասին՝ անկախ հակամարտության ազդեցությունից: Առաջնագծում չգտնվող քաղաքային բնակավայրերում՝ Հայաստանում մնալու պլաններ ունեցողները նույնպես հայտնում են մեծ մտահոգություն, ինչն ընդգծում է նույնիսկ Հայաստանում մշակութային ինքնությունը կորցնելու համատարած մտավախությունները:

> *«Ներկա պահին մենք ապրում ենք Հայաստանում, սակայն պլանավորում ենք հեռանալ, քանի որ այստեղ արժանապատիվ ապրելու հնարավորություն չենք տեսնում: Իշխանություններն ամեն ինչ անում են փախստականներին էլ ավելի նվաստացնելու համար: Մենք կվերադառնանք, եթե Արցախը վերադարձվի մեզ՝ հայերիս»:* (Կին, ոչ սահմանամերձ գյուղական բնակավայր, մասնավոր կամ պետական հատվածի աշխատող, 30-45 տարիքային խումբ, հետագա պլաններում չկողմնորոշված):

Գենդերային տեսանկյունը. դրանց և կոնկրետ գենդերի միջև կապեր չեն արձանագրվել:

Մտահոգություններն ըստ տարիքային խմբերի. ամենաշատ տագնապ նկատվում է երիտասարդների (18-30 տարիքային խումբ) և միջին տարիքի ռեսպոնդենտների (45-60 տարիքային խումբ) շրջանում, ինչը վկայում է իրենց մշակութային ինքնությունը կորցնելու լուրջ մտավախությունների մասին:

> *«Ադրբեջանցիները միևնույն է դպրոցական երեխաներին սովորեցնում են ատել հայերին. մենք նման բան չենք անում»: (Կին, սահմանամերձ գյուղական բնակավայր, մասնավոր կամ պետական հատվածի աշխատող, 45-60 տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ):*

Տատանումներն ըստ զբաղվածության. դրանց և զբաղվածությունների տեսակների միջև կապեր չեն արձանագրվել:

21. Կարծրատիպերի վերագրում և սխալ ներկայացում

Տատանումներն ըստ տարածաշրջանների. ամենաշատ անհանգստություն նկատվում է առաջնագծում գտնվող քաղաքային բնակավայրերում, որտեղ ռեսպոնդենտները վախենում են իրենց մասին խիստ բացասական կարծիքների ձևավորումից: Նույնիսկ առաջնագծում չգտնվող բնակավայրերում մտահոգությունների մակարդակը շարունակում է բարձր մնալ, ինչը ցույց է տալիս, որ կարծրատիպերի վերագրման և սխալ ներկայացման առնչությամբ կան տարածված մտավախություններ: Սա հաճախ ներառում է այն կարծրատիպերի վերագրման և սխալ ներկայացման մասին քննարկումները, որոնց բախվում են Լեռնային Ղարաբաղի մարդիկ այն համայնքներում, որտեղ նրանք ապաստան են գտել:

> *«Իհարկե, լրատվության միջոցներով բացասական կարծրատիպեր չեն տարածվում, սակայն կան սոցիալական ցանցեր, որտեղ նման խոսակցություններ կան ու տարածվում են: Գուցե ոչ շատ, սակայն վատն ավելի շուտ է տարածվում...»:* (Կին, սահմանամերձ գյուղական բնակավայր, ուսանող, 18-30 տարիքային խումբ, հետագա պլաններում չկողմնորոշված):
>
> *«Նման երևույթներ նկատելի են անգամ Հայաստանում մեծ լսարան ունեցող լրատվության միջոցներում, ինչն իսկապես մեծ սպառնալիք ու խոչընդոտ է»:* (Կին, սահմանամերձ գյուղական բնակավայր, մասնավոր կամ պետական հատվածի աշխատող, 18-30 տարիքային խումբ, նախընտրում է Հայաստանում մնալ):
>
> *«Ես Հայաստանում եմ 2020 թվականից, և իմ մասին ոչ մի վատ խոսք չեմ լսել, ոչ մեկից, ոչ իմ և ոչ էլ իմ ընտանիքի մասին: Սակայն տարբեր մարդկանցից, ղարաբաղցիներից հաճախ եմ լսում, որ իրենց մասին բացասական կարծիքներ են հնչել: Չգիտեմ, երևի ինչ-որ մարդիկ են, որ տարածում են այդ կարծիքները...»:* (Կին, սահմանամերձ գյուղական բնակավայր, գործազուրկ, 45-60 տարիքային խումբ, նախընտրում է Հայաստանում մնալ):

Գենդերային տեսանկյունը. պատասխաններում դրանց հետ կապված առանձնահատուկ տատանումներ՝ ըստ գենդերային խմբերի, չեն արձանագրվել:

Մտահոգություններն ըստ տարիքային խմբերի. վերլուծությամբ կարծրատիպերի վերագրման և սխալ ներկայացման սպառնալիքների ընկալումների հարցում որևէ առանձնահատուկ տարբերություն՝ ըստ տարիքային խմբերի, չի արձանագրվել:

Տատանումներն ըստ զբաղվածության. ռեսպոնդենտների շրջանում կարծրատիպերի վերագրման և սխալ ներկայացման ընկալումներում զգալի տարբերություններ՝ ըստ զբաղվածության տեսակների, չեն դիտարկվել:

Կատեգորիաների միջև լրացուցիչ կապերը

Անվտանգություն և ազատություն

Ֆիզիկական անվտանգության առնչությամբ մտահոգությունները հաճախ կապված են ազատությունների սահմանափակումների առնչությամբ առկա մտավախությունների հետ: Այն ռեսպոնդենտները, որոնք մեծապես մտահոգված են ֆիզիկական ապահովության համար, նույնպես հակված են անհանգստանալու իրենց քաղաքացիական ազատությունների ու խոսքի ազատության հնարավոր սահմանափակումներից: Լեռնային Ղարաբաղ վերադառնալու պլաններ ունեցողները շատ բարձր գնահատական են տալիս ֆիզիկական սպառնալիքներին («Անվտանգություն» կատեգորիա) և խոսքի ու քաղաքացիական ազատությունների («Ազատություն» կատեգորիա) հետ կապված սպառնալիքներին, ինչը վկայում է այն

ընկալման մասին, որ անձնական ազատությունների կորստի հետ կարող են առաջանալ մեծ անվտանգային ռիսկեր:

> *«Իմ վերադարձը հնարավոր է միայն հայկական Արցախ, սակայն այս բոլոր սպառնալիքներն ինձ թույլ չեն տա վերադառնալ: Բնականաբար, եթե վերադառնամ հայկական Արցախ, ես որևէ խտրականության կամ ճնշման չեմ ենթարկվի: Եթե լինեն անվտանգության նվազագույն երաշխիքներ, ապա ես սիրով կվերադառնամ, իսկ սոցիալական վիճակը ես առաջնային չեմ համարում»:* (Կին, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, մասնավոր կամ պետական հատվածի աշխատող, 18-30 տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ):

Անվտանգություն և բարեկեցություն

Ֆիզիկական անվտանգության և տնտեսական կայունության առնչությամբ մտահոգությունների միջև առկա է կապ: Այն ռեսպոնդենտները, որոնք իրենց ֆիզիկական ապահովության հարցում անապահով են զգում, իրենց տնտեսական բարեկեցության, այդ թվում՝ աշխատանքի կայունության և հիմնական ծառայությունների հասանելիության առնչությամբ նույնպես ունեն զգալի անհանգստություններ: Ֆիզիկական գոյության հետ կապված սպառնալիքներին տրված բարձր գնահատականներին զուգահեռ հաճախ բարձր գնահատականներ են տրվում նաև կայուն զբաղվածության և բավարար կենսամակարդակի հետ կապված սպառնալիքներին: Սա ցույց է տալիս, որ ֆիզիկական անվտանգության հարցում անկայունությունն ուղղակիորեն ազդում է տնտեսական կայունության վրա:

> *«Ստեփանակերտում բիզնես ունեի և ուզում էի բիզնեսս վերսկսել Երևանում, սակայն իրավիճակն ուսումնասիրելուց հետո հասկացա, որ Հայաստանում անկարգությունների մեծ հավանականություն կա, ինչն անբարենպաստ միջավայր է ստեղծում ներդրումների համար: Սակայն ես ունեմ ընտանիք և երեխաներ, որոնց պետք է կերակրել և ապրուստով ապահովել: Ուստի, դեռ մտածում եմ, որ պետք է գնանք մեկ այլ երկիր, որտեղ ապահով կլինի»:* (Տղամարդ, սահմանամերձ քաղաքային բնակավայր, մասնավոր կամ պետական հատվածի աշխատող, 30-45 տարիքային խումբ, հետագա պլաններում չկողմնորոշված):

Անվտանգություն և ինքնություն

Ֆիզիկական անվտանգության առնչությամբ մտահոգությունները հաճախ կապված են ինքնությունը ճնշելու մտավախությունների հետ: Այն ռեսպոնդենտները, որոնք մեծապես անհանգստացած են ֆիզիկական սպառնալիքների համար, խոր մտավախություն են հայտնում նաև իրենց մշակութային ինքնությունը կորցնելու առնչությամբ: Լեռնային Ղարաբաղ վերադառնալու մտադրություն ունեցողները շատ բարձր գնահատական են տալիս ֆիզիկական սպառնալիքներին («Անվտանգություն» կատեգորիա) և ինքնությունը ճնշելու սպառնալիքներին («Ինքնություն» կատեգորիա), ինչը ցույց է տալիս ֆիզիկական ապահովության և մշակութային ինքնության պահպանման փոխկապակցվածությունը:

> *«Ես ցանկանում եմ տուն գնալ, սակայն ապրել արժանապատիվ, ինչպես 2020 թվականի պատերազմից առաջ: Ռուս խաղաղապահների և ադրբեջանցիների փոխարեն ես ակնկալում եմ միջազգային ուժերի ներկայությունը՝ երաշխիքների տրամադրմամբ: Ես ցանկանում եմ վերադառնալ, որպեսզի ստիպված չլինեմ հեռու գնալ Արցախից»:* (Կին, սահմանամերձ գյուղական բնակավայր,

թոշակառու, 60-ից բարձր տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ):

«...Համենայնդեպս, այստեղ՝ Հայաստանում, գոնե մենք մեր լեզուն, մեր մշակույթն ունենք, մենք պարզապես ապագա չունենք, եթե գնանք ադրբեջանական Ղարաբաղ: Երկու տարի հետո մեր ինքնությունն ամբողջությամբ կփոխվի»: (Տղամարդ, սահմանամերձ գյուղական բնակավայր, գործազուրկ, 45-60 տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ):

Ազատություն և բարեկեցություն

Ժողովրդավարական կառավարման և խոսքի ազատության առնչությամբ մտահոգությունները կապված են բարեկեցության ու սոցիալական ապահովության առնչությամբ անհանգստությունների հետ: Այն ռեսպոնդենտները, որոնք բարձր գնահատական են տալիս ազատության հետ կապված սպառնալիքներին, նույնպես հակված են զգալի մտահոգություններ հայտնելու իրենց բարեկեցության, այդ թվում՝ սոցիալական ծառայությունների ու զբաղվածության հասանելիության առնչությամբ: Արդյունավետ ժողովրդավարական կառավարման հետ կապված սպառնալիքներին տրված բարձր գնահատականներին զուգահեռ հաճախ բարձր գնահատականներ են տրվում նաև սոցիալական ապահովության և կայուն զբաղվածության հետ կապված սպառնալիքներին, ինչը վկայում է, որ կառավարման գործընթացում ենթադրյալ ձախողումներն ազդում են սոցիալ-տնտեսական բարեկեցության վրա:

«Մենք չմնացինք Հայաստանում, քանի որ ես ու ամուսինս չէինք կարողանում աշխատանք գտնել: Արցախից տեղահանվելուց հետո մեկնեցինք Ռուսաստան: Ես երկարամյա փորձ ունեցող բժիշկ եմ և աշխատանքի տեղավորվեցի մասնավոր կլինիկայում: Ամուսինս բիզնես է սկսել, իսկ մեր երեխաները սովորում են դպրոցում: Այստեղ բնակարանների վարձավճարները շատ ավելի ցածր են, քան Հայաստանում, և կյանքն ավելի ապահով է: Այդ պատճառով մենք հավանաբար կմնանք Ռուսաստանում: (Կին, սահմանամերձ գյուղական բնակավայր, մասնավոր կամ պետական հատվածի աշխատող, 30-45 տարիքային խումբ, հետագա պլաններում չկողմնորոշված):

Ազատություն և ինքնություն

Խոսքի ազատության և քաղաքացիական ազատությունների առնչությամբ մտահոգությունները կապված են ինքնության ճնշման և մշակութային բազմազանության հետ կապված մտավախությունների հետ: Այն ռեսպոնդենտները, որոնք մեծապես մտահոգված են ինքնաարտահայտման ազատության համար, նույնպես անհանգստանում են իրենց մշակութային ինքնությունը պահպանելու հնարավորության համար: Լեռնային Ղարաբաղ վերադառնալու պլաններ ունեցողները շատ բարձր գնահատական են տալիս խոսքի և քաղաքացիական ազատությունների հետ կապված («Ազատություն» կատեգորիա) ու ինքնության ճնշման սպառնալիքներին («Ինքնություն» կատեգորիա), ինչը ցույց է տալիս այն մտավախությունները, որ իրենց ազատությունները կսահմանափակվեն իրենց մշակութային արտահայտման հետ միասին:

«Ինչպե՞ս կարող ենք խոսել մարդու իրավունքների ու ազատությունների մասին, երբ դրանք չեն հարգվում Ադրբեջանում: Ի՞նչ հույս ունեն հայերը նման իրավիճակում: (Կին, սահմանամերձ գյուղական բնակավայր, մասնավոր կամ պետական հատվածի աշխատող, 30-45 տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ):

Բարեկեցություն և ինքնություն



Տնտեսական կայունության և սոցիալական ապահովության առնչությամբ մտահոգությունները կապված են ինքնության ճնշման և մշակութային բազմազանության պահպանման առնչությամբ մտավախությունների հետ: Այն ռեսպոնդենտները, որոնք մեծ մտահոգություն են հայտնում իրենց բարեկեցության առնչությամբ, մեծ տագնապներ ունեն իրենց մշակութային ինքնության առնչությամբ: Բավարար կենսամակարդակի և կայուն զբաղվածության հետ կապված սպառնալիքներին («Բարեկեցություն» կատեգորիա) տրված բարձր գնահատականներին զուգահեռ հաճախ բարձր գնահատականներ են տրվում նաև մշակութային բազմազանության հետ կապված ու ինքնության ճնշման սպառնալիքներին («Ինքնություն» կատեգորիա), ինչը ցույց է տալիս, որ տնտեսական և սոցիալական կայունությունը չափազանց կարևոր նշանակություն ունի մշակույթի պահպանության հարցում:

> *«Ադրբեջանցիներն ամեն ինչ անելու են, որ հայերին վնաս հասցնեն ինչպես սոցիալապես, այնպես էլ հոգեպես»:* (Տղամարդ, սահմանամերձ գյուղական բնակավայր, գործազուրկ, 45-60 տարիքային խումբ, նախընտրում է տուն վերադառնալ):

Վերհանված երկընտրանքները և հակասությունները

Անվտանգությունն ընդդեմ ազատության

Ուսումնասիրությամբ վերհանվում է ֆիզիկական անվտանգության ցանկության և հատկապես՝ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության նկատմամբ Ադրբեջանի քաղաքականության համատեքստում անձնական ազատությունների պահպանման միջև լուրջ երկընտրանքը: Ռեսպոնդենտները, հատկապես՝ Լեռնային Ղարաբաղ վերադառնալու պլաններ ունեցողները, ֆիզիկական սպառնալիքների, ինչպես նաև խոսքի ազատության և քաղաքացիական ազատությունների հետ կապված սպառնալիքների առնչությամբ հայտնում են մեծ մտահոգություն: Սա վկայում է այն մասին, որ նրանց ֆիզիկական ապահովությունը երաշխավորված չէ Ադրբեջանի կառավարման ներքո, և որ ցանկացած վերադարձ կարող է ուղեկցվել նրանց ազատությունների խիստ սահմանափակումներով:

Այս պայմաններում երկընտրանքը ոչ թե անվտանգության միջոցներն անձնական ազատությունների հետ հավասարակշռելը, այլև անվտանգության բացակայության և ազատությունների ճնշման միջև հիմնարար հակասությունն է: Ադրբեջանի՝ հայ բնակչության վերադարձը Լեռնային Ղարաբաղ կանխելու քաղաքականությունը խորացնում է ֆիզիկական բռնության և ագրեսիայի հետ կապված մտավախությունները՝ միաժամանակ զգալի վտանգ ներկայացնելով նրանց քաղաքացիական ազատությունների ու ժողովրդավարական իրավունքների համար: Սա ստեղծում է անապահովության խոր զգացում և իրենց մշակութային ու քաղաքական ինքնությունն ազատորեն արտահայտելու անհնարինության հետ կապված մտավախություն:

Տնտեսական [ան]կայունությունն ընդդեմ խաղաղության

Տնտեսական սպառնալիքները մեծմտահոգություն են ռեսպոնդենտների, հատկապես՝ Լեռնային Ղարաբաղ վերադառնալու պլաններ ունեցողների, ինչպես նաև Հայաստանում մնալու պլաններ ունեցողների համար: Բարձր տնտեսական անկայունությունը կարող է մարդկանց ստիպել առաջնահերթություն տալ ոչ թե երկարաժամկետ խաղաղության ջանքերին, այլև կարճաժամկետ ֆինանսական կայունությանը: Տնտեսական անհավասարությունն ու աշխատատեղերի բացակայությունը խորացնում են ապրուստի միջոցների հայթայթման և խաղաղ նախաձեռնություններին աջակցելու միջև լարվածությունը: Տնտեսական

անկայունությունը կարող է հանգեցնել սոցիալական անկարգությունների և խոչընդոտել խաղաղության կառուցման ջանքերին՝ ընդգծելով տնտեսական կայունության բացակայության և խաղաղության ձգտման միջև լուրջ երկընտրանքը: Ուսումնասիրությամբ շեշտադրվում է այս խնդիրը և ընդգծվում կարճաժամկետ տնտեսական կարիքների լուծման ու երկարաժամկետ խաղաղության ջանքերի վրա կենտրոնանալու միջև հակասությունը:

Մշակույթի պահպանությունն ընդդեմ ինտեգրման

Ուսումնասիրությամբ ընդգծվում է Լեռնային Ղարաբաղ «պոտենցիալ վերադարձողների», ինչպես նաև՝ Հայաստանում մնալու պլաններ ունեցողների շրջանում ինքնության ճնշման և մշակութային ձուլման հետ կապված ուժեղ մտավախությունները: Սա ցույց է տալիս մշակութային ինքնության պահպանության և այլ սոցիալ-քաղաքական միջավայրում ինտեգրվելու միջև էական երկընտրանքը: Ռեսպոնդենտները խոր մտահոգություն են հայտնում Ադրբեջանի իշխանության ներքո իրենց մշակութային ժառանգությունը կորցնելու առնչությամբ, ինչը վկայում է մշակույթի պահպանությունն ինտեգրումից նախընտրելու մասին: Ադրբեջանում գերիշխող մշակութային նորմերին համապատասխանելու հնարավոր ճնշումն ուղղակի վտանգ է հայկական մշակութային ինքնության պահպանության համար՝ հակասություն ստեղծելով այս երկու նպատակների միջև: Հայաստանում մնալ նախընտրողներից շատերը 2023 թվականի սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղից տեղահանվելուց հետո նույնպես մտահոգություն են հայտնում իրենց ղարաբաղյան մշակութային ինքնությունը կորցնելու և Հայաստանում տիրող նորմերին ձուլվելու ռիսկերի առնչությամբ: Այլ կերպ ասած մի շարք ռեսպոնդենտների շրջանում գերիշխում է հայ հասարակությանն ինտեգրվելիս «արցախցու» ինքնությունը կորցնելու մտավախությունը:

> *«Առայժմ մենք ապրում ենք Հայաստանում, սակայն պլանավորում ենք հեռանալ, քանի որ այստեղ արժանապատիվ ապրելու հնարավորություն չենք տեսնում: Իշխանություններն ամեն ինչ անում են փախստականներին էլ ավելի նվաստացնելու համար: Մենք կվերադառնանք, եթե Արցախը վերադարձվի մեզ՝ հայերիս»:* (Կին, ոչ սահմանամերձ գյուղական բնակավայր, մասնավոր կամ պետական հատվածի աշխատող, 30-45 տարիքային խումբ, հետագա պլաններում չկողմնորոշված):
>
> *«Ես պլանավորում եմ մնալ Հայաստանում, սակայն փորձել ապրել այնպես, ինչպես Արցախում»:* (Կին, ոչ սահմանամերձ գյուղական բնակավայր, մասնավոր կամ պետական հատվածի աշխատող, 18-30 տարիքային խումբ, նախընտրում է մնալ Հայաստանում):



Եզրակացություն և առաջարկություններ. հետագա նկատառումներ

«Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի կողմից իրականացված ուսումնասիրությունը բազմակողմանի պատկերացում է տալիս ներկայումս Հայաստանում բնակվող՝ Լեռնային Ղարաբաղից տեղահանվածների հիմնարար կարիքների ու մտավախությունների մասին:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Հայաստանում մնալու պլաններ ունեցողների և Լեռնային Ղարաբաղ վերադառնալու մտադրություն ունեցողների միջև հիմնական տարբերությունը՝ նրանց մտահոգությունների ինտենսիվության ու ուղղվածության մեջ է:

Լեռնային Ղարաբաղ վերադառնալու պլաններ ունեցող ռեսպոնդենտները, ի տարբերություն Հայաստանում մնալ նախընտրողների կամ չկողմորոշվածների, բոլոր կատեգորիաների առնչությամբ ունեն բավականին մեծ մտահոգություններ: Այս խումբը հատկապես շեշտում է ինքնության, ժողովրդավարական կառավարման և մշակույթի պահպանության հետ կապված սպառնալիքները:

Ինքնության հետ կապված մտահոգությունները բոլոր խմբերի կողմից ստացել են ամենաբարձր միջին գնահատականները, ինչը ցույց է տալիս մշակութային ինքնության պահպանման կարևորությունը:

Ազատության հետ կապված կարիքներին, հատկապես արդյունավետ ժողովրդավարական կառավարմանն ու խոսքի ազատությանը նույնպես տրվում է մեծ առաջնահերթություն:

Հայաստանում մնացողների կամ չկողմնորոշվածների հիմնական մտահոգությունները վերաբերում են ընդհանուր անվտանգությանը, բավարար կենսամակարդակին և քաղաքական կայունությանը: Փոխարենը՝ «պոտենցիալ վերադարձողները» մեծապես շեշտը դնում են ֆիզիկական սպառնալիքների, քաղաքական և սոցիալական սպառնալիքների և Ադրբեջանի վերահսկողության ներքո ժողովրդավարական և մշակութային ճնշումների հետ կապված մտավախությունների վրա:

Ստորև բերված առաջարկություններով համապարփակ և իրատեսական մոտեցում է առաջարկվում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և Հայաստանում ապաստան գտած անձանց առջև ծառացած բարդ խնդիրների լուծման համար՝ երկարաժամկետ հեռանկարում նպատակով ունենալով խթանել Հայաստան-Ադրբեջան խաղաղության գործընթացը:

Աջակցել տնտեսական կայունությանն ու զբաղվածությանը.

- Տրամադրել աշխատատեղերի ստեղծման ծրագրերի և տեղահանված անձանց կարիքներին հարմարեցված մասնագիտական վերապատրաստումների համար ֆինանսավորում՝ ընդլայնելով աշխատանքի տեղավորվելու նրանց հնարավորություններն ու տնտեսական անկախությունը:
- Աջակցել տեղահանված անձանց փոքր բիզնեսի զարգացումն ու ձեռնարկատիրական գործունեությունը խթանող նախաձեռնություններին՝ նպաստելով տնտեսական կայունությանն ու ինքնաբավությանը:

Ընդլայնել սոցիալական ծառայությունների շրջանակը, բարելավել ենթակառուցվածքներն ու կենսամակարդակը.

- Ֆինանսավորել այն նախագծերը, որոնք բարելավում են տեղահանված անձանց առողջապահության, կրթության և սոցիալական ապահովության հասանելիությունը՝ ապահովելով, որ նրանք ստանան իրենց կյանքը վերակառուցելու համար անհրաժեշտ աջակցություն:
- Ներդրումներ կատարել տեղահանված անձանց հյուրընկալող տարածքների ենթակառուցվածքների զարգացման մեջ՝ բարելավելով կենսապայմաններն ու դյուրացնելով ինտեգրումը:
- Բարելավել այնպիսի հիմնական ծառայությունների հասանելիությունը, ինչպիսիք են բնակարանային ապահովումը, առողջապահությունը և կրթությունը՝ հասցեագրելով տեղահանված անձանց անմիջական կարիքներն ու բարելավելով նրանց կյանքի որակը:
- Մշակել և իրականացնել տեղահանված երեխաների և երիտասարդների կարիքներին համապատասխանեցված կրթական ծրագրեր՝ ապահովելով, որ նրանք ստանան որակյալ կրթություն ու աջակցություն:

Բարելավել ժողովրդավարական կառավարումը և քաղաքական կայունությունը.

- Իրականացնել բարեփոխումներ՝ ժողովրդավարական կառավարումն ամրապնդելու, թափանցիկությունն և հաշվետվողականությունը մեծացնելու նպատակով՝ այդկերպ ամրապնդելով պետական հիմնարկների նկատմամբ հանրային վստահությունը:
- Տրամադրել տեխնիկական և ֆինանսական աջակցություն Հայաստանում ժողովրդավարական կառույցների ամրապնդման նպատակով՝ ապահովելով, որ դրանք կարողանան արդյունավետորեն պաշտպանել ժողովրդավարական արժեքներն ու գործընթացները:
- Պաշտպանել քաղաքացիական ազատությունները և խթանել խոսքի ազատությունը՝ ապահովելով, որ բոլոր քաղաքացիները, այդ թվում՝ տեղահանված անձինք կարողանան ազատորեն արտահայտել իրենց կարծիքն ու մասնակցել ժողովրդավարական գործընթացին:
- Ֆինանսավորել խոսքի ազատությունը, լրատվության միջոցների անկախությունը և քաղաքացիական ազատությունները խթանելուն ուղղված ծրագրերը՝ այդպիսով հնարավորություն տալով տեղահանված անձանց բարձրաձայնել իրենց մտահոգություններն ու ձգտումները:

Խթանել սոցիալական համերաշխությունը և ինտեգրումը.

- Կազմակերպել համայնքաշինական այնպիսի աշխատանքներ, որոնք խթանում են տեղահանված անձանց և տեղի բնակչության միջև սոցիալական համերաշխությունը՝ նպաստելով փոխըմբռնմանն ու աջակցությանը:
- Կազմակերպել համայնքահեն մշակութային միջոցառումներ, որոնք խթանում ու ապահովում են մշակութային նորմերի, ավանդույթների և Լեռնային Ղարաբաղի հայերի մշակութային յուրահատուկ ինքնության շարունակականությունը՝ այդկերպ նպաստելով հայկական մշակույթի ընդհանուր բազմազանությանն ու հարստությանը:
- Տրամադրել խորհրդատվություն և հոգեկան առողջության ծառայություններ՝ տեղահանված անձանց տրավմաները վերացնելու նպատակով՝ այդկերպ նպաստելով նրանց հոգեբանական վերականգնմանն ու բարեկեցությանը:

Իրավունքների պաշտպանությունը և իրավական աջակցությունը.

- Պաշտպանել տեղահանված անձանց իրավունքներն ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում՝ ապահովելով, որ քաղաքականության մշակման գործընթացներում նրանց ձայնը լինի լսելի, իսկ նրանց կարիքները՝ բավարարված:
- Օգտագործել բոլոր հասանելի միջազգային իրավական մեխանիզմները՝ ներկայում Ադրբեջանի վերահսկողության ներքո գտնվող՝ Լեռնային Ղարաբաղի հայկական մշակութային ու պատմական ժառանգությունը պահպանելու համար:
- Առաջարկել իրավական օգնություն տեղահանված անձանց՝ օգնելով նրանց լուծել իրավական դժվարությունները, ինչպես նաև ապահովելով նրանց իրավունքների պաշտպանությունը:
- Մշակել և իրականացնել կարողությունների զարգացման և կրթական ծրագրեր՝ տեղահանված անձանց շրջանում նրանց իրավունքների, ինչպես նաև իրավունքների խախտումների դեպքում հատուցման հասանելի մեխանիզմների վերաբերյալ տեղեկացվածության և գիտելիքների մակարդակը բարձրացնելու նպատակով:

Առաջին և երկրորդ ուղու դիվանագիտական նախաձեռնություններ.

- Աջակցել Հայաստանի և Ադրբեջանի միջև քաղաքական կայունության և խաղաղության բանակցությունների ամրապնդմանն ուղղված դիվանագիտական ջանքերին՝ վերացնելով տեղահանման հիմնական պատճառները:
- Նպաստել Հայաստանի և Ադրբեջանի քաղաքացիական հասարակությունների միջև կայուն երկխոսությանը՝ փարատելու տեղահանված անձանց մտահոգություններն ու գտնելու հակամարտության համար փոխադարձ ընդունելի լուծումներ:
- Աջակցել վստահության ամրապնդման միջոցառումներին և երկրորդ ուղու դիվանագիտական նախաձեռնություններին, որոնք խթանում են երկու ազգերի միջև վստահությունն ու փոխըմբռնումը՝ ճանապարհ հարթելով կայուն խաղաղության համար:

Հղումներ

[i] Եվրոպական պառլամենտ, լիագումար նիստ՝ 2022 թվականի հոկտեմբեր, Հարցուպատասխան. Հայաստանի և Ադրբեջանի միջև լարվածության սրում. https://www.europarl.europa.eu/RegData/etudes/ATAG/2022/733675/EPRS_ATA(2022)733675_EN.pdf:
[ii] Նոր Արևելյան Եվրոպա. Ի՞նչ է կանգնած Հայաստանի և Ադրբեջանի միջև բախումների նոր փուլի հետևում. https://neweasterneurope.eu/2022/09/20/armenia-azerbaijan-pelosi-russia-ukraine/:
[iii] CivilNet.am. Ո՞ւր են տանում ադրբեջանցի «բնապահպանների» հետքերը https://www.civilnet.am/en/news/686152/who-really-are-azerbaijans-environmental-activists-blockading-karabakh/:
[iv] Գործիքը կարելի է գտնել հետևյալ հղմամբ՝ https://inclus.com/en/:
[v] Թրանսենդ ինթերնեշընալ. Խաղաղության զարգացման միջավայրի ցանց. «Հիմնարար կարիքների մոտեցումը», հեղինակ՝ Յոհան Գալթունգ, էջ 12, https://www.transcend.org/galtung/papers/The%20Basic%20Needs%20Approach.pdf:
[vi] Քաղաքացիական հակամարտությունների վերափոխման վերաբերյալ առցանց դասընթաց, Գրենոբլ, 2011թ., Դիրքորոշումներ, շահեր և կարիքներ: Աղբյուրը՝ https://www.irenees.net/bdf_fiche-experience-770_en.html:



© 2024. Զեկույցը հրապարակվել է «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի կողմից:
© 2024. Նկարազարդումը՝ «Խաղաղության երկխոսություն» ՀԿ:

Հարցերի դեպքում խնդրում ենք կապ հաստատել Մարիաննա Խաժակյանի հետ:
Էլ. հասցե՝ khazhakyan.marianna@peacedialogue.am:

Նախագծի տնօրեն՝ Էդգար Խաչատրյան

Խմբագիր՝ Վահագն Անտոնյան

Աշխատանքային խումբ՝
Մարիաննա Խաժակյան
Անուշ Հարությունյան
Մարիա Գալստյան

Թարգմանիչ՝
Խաչատուր Ադումյան

Ուսումնասիրությունն իրականացվել է «Հաշտեցման ռեսուրսներ» ՀԿ-ի հետ սերտ համագործակցությամբ՝ Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ:

Հրապարակման բովանդակության պատասխանատվությունը կրում է «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն: Այն չի արտացոլում «Հաշտեցման ռեսուրսներ» ՀԿ-ի և Եվրոպական միության տեսակետները: